



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.54-55  
Շ-13

ԽՈՐԵՆ ՌԱԴԻԿՈ

# ԶՎԱՐԹ ՀԱՄԱՁԱՐԿԵՐ



891.99

Շ-14

ԽՍԴԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ. ԿԵՆՏՐՈՆ.  
ՀՐԱՄԱՆԱԿՑ. — ՄՈՍԿՎԱ, 1931

391.99

12 MAR 2011

2-14

ԽՈՐԵՆ ՌԱԴԻՔ

ԿԵՐ

# ԶՎԱՐԹ ՀԱՄԱՀԱՐԿԵՐ

1006  
9680X  
1006

3042

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՑԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ

1931

24.07.2013

## ԿԱՐՏԵՐՈՒՄ

...Նա այսորվա գալուն յերբեք չեր սպասում  
և իր մտքովն անդամ դեռ չեր անցկացել,  
վոր մի որ, այս դժնի, մռայլ բանտամասում  
նա նստելու յե մութ ու խոնավ սառցե...

Նա չլսեց թե ինչպես մետաղե ծանր դուռը զբնդոցով փակ-  
վեց. Սյդնը անից եր, վոր նա դեռ վոչ մի կերպ չեր կարողա-  
նում հարդարել իր մտքերը, լուցնել իր ներքին ժխորը,  
վոր խանգարում եր զրաի ձայներին ունկընդրելուն:

Մի քանի բոպե նա անշարժ քարացավ կամերայի կեն-  
տրոնում և նրա բարձր հասակը ընդհանուր կիսախավարի  
և բարձրադիր վանդակապատ լուսամուտի պայծառ ֆոնի  
վրա, այդ բոպեյին գծվում եր իր վողջ կորացած և զլիա-  
հակ անշարժությամբ: Ապա նա ուշաբերվեց, ուղղվեց և  
բարձր ու վողջ կրծքով հառաչեց: Զեռքը յինթազիտակցա-  
բար դեպի միրուքը տանելով, նա դանդաղ շփեց իր փափուկ  
մազերը, բայց իսկույն ցած թողեց: Դառն հեղնանքը սահեց  
նրա դեմքով և նա մրմնջաց ինքնիրեն:

— Զոգնեց... միրուքն ել չոգնե... Վճնց հոտն առան  
Վերջին խոսքերը նա արտասանեց կես հարցական և կես  
զարմացական տօնով, ապա բնազդական մի մղումով քայլեց  
դեպի լուսամուտը նրա ճակատը հասնում եր ուղիղ լուսա-  
մուտի ներքին ձողին, իսկ աչքերի դեմ յերկնքի պայծառ  
կապույտի մի պատափից և ձորի հանդիպակած լեռնաշղթայի  
մի ժայռեն զանգվածից բացի վոչինչ չեր յերեւմ: Վոչինչ:  
Բայց նա շատ լավ գիտեր, վոր այնտեղ ցածում խորը ձոր  
և ընկած, — նեղ ինչպես մի կիրճ, և այդ ձորից հորդող իր-  
նային ջրերի վրա կա մի հնդամյա փայտաշեն կամուրջ, իսկ

այդ կամուրջին մշտապես արթուն կանգնած են զույդ պահակները։ Նա այդ բոլորը տեսնում ե վառ և կենդանի, իր հիշողության պայծառ աչքերով։

Բայց վոչ... նրա հիշողությունը մթազնեց։ Ի՞նչ պահակներ եին դրանք։ Ցարական սալդաթներ, Ազգային գվարդիայի զինվորներ, թե...

Նա հասկացավ, վոր այնտեղ հիմա կանգրած կլինեն բոլորովին ուրիշ մարդիկ, իրենց աստղանիշ սլացիկ գլխարկներով, և այն ժամանակ, նրա կրծքից նորից թռավ մի խորը հառաջ։ Նա հասկացավ, վոր այն յերբեմնի բերդը, ինչպես և ամբողջ այն յերկիրը, վոր նա յերբեմն գիւղեր, վորում ապրել և գործել եր նա, միայն հիշողության մեջ եր ապրում և հընչում, իսկ ժամանակի և տարածության մեջ վաղուց եր մեռել։

Նա սարսուց և գլուխը նորից հակեց նրա ամրող եյությունը համակեց այն ծանր և անհասկանալի զգացումը, վոր մի քանի անգամ մինչև այդ դողի պես անցել և փշաքաղել եր նրա վողջ գիտակցությունը։ Այդ զգացումը անրացատրելի յեր, գուցե ծիծաղելի՝ իր անհեթեթությամբ։ Նրան թվում եր, վոր և տարվա բացակայությունից հետո իր հայրենիքը, չքնաղ վրաստանը, ինչ վոր մոգական զավագանվ անհետացել եր։ Թվում եր թե ուրիշ եր այն քաղաքը, ուր նա անց եր կացրել իր վողջ կյանքը, ուրիշ այն բաղմությունը, վորի բարբառն ու ժխորը միշտ շրջապատել ելին նրան և այն ժամանակ նրան թվում եր, վոր մյլ են նաև հանդիպակած լեռները, այլ և պղտոր թուռը, վորը լուս և մտախոն անցնում եր կամքչների տակով, շրջակա անցուղարձին անտարբեր և անուշադիր։

Հայրենիքը վոտ դնելուց ի վեր, մի քանի անգամ այդ ոտարութիւնը զգացումը վորողել իր նրա սիրուը, բայց վոչ մի անգամ նա այդքան խորունկ և իրական կերպով չեր ապրել դրանով։

— Մենք յերկրին մոռացանք և յերկիրը մեզ, — ասես յեղբափակեց նա իր մտքերը և նորից նայեց իր շուրջը, հայացքը անմիտ կերպով հածեց անկյունից՝ անկյուն և առա հողնած, ճակատը դնելով ժանդոտ վանդակաձողին, հայացքը հառեց դրսի ժայռեղեն զանդվածին։

Այսպիս նա յերկար մնաց...

## ՄԻՋՏԵՐԻԱՆԵՐ

Քրում յերեկոյան աղջամուղջն եր խտանում, իսկ այստեղ՝ կամերում արդեն մութն եր։ Միայն բանդապահի վարժ և խուզարկու աչքը կարող եր նկատել ծղնոտի անկողնուն անշարժ ցցված այն կերպարանքը, վորը կծկվել եր ու յերկտակել։

— Կերեք, — ասաց նա կարճ և դուրս գնաց։

Քիչ հետո առաստաղին ամրացրած և յերկաթալարով ցանցապատ ելեկտրալամպը վառվեց և մի աղոտ փայլով, վողողեց բանտի ընդհանուր քարակուռ գորշությունը։

Բանտարկյալը զգվանքի մի արտահայտությամբ զեն հրեց երեն բերած իրիկնաճաշը և ձգվեց ծղնոտին։

Յեթե նա կարողանար քնել, կամ գոնեն նիրհել հանգստացնել իր լարված ջկերը, — այդ հիանալի կլիներ։ Այդ իսկական փրկություն կլիներ, վորովհետեւ հանգստացած և թարմացած ուղեղով նա կլարողանար ճիշտ կերպով ճանաչել և հասկանալ իր դրությունը և միջոցներ փնտոել այս վորջից, այս մութ թակարդից դուրս պըծնելու։ Իսկ հիմա ամեն ինչ խառն ե, ինչպես զառանցանք։ Ընդհանրապես մի վայրենի, մի բարբարոսական իմաստ կա այս բանտ կոչված բնում։

Նա վեր թռավ տեղից և ոկսեց արագ յետ ու առաջ քայլել շվեր ճակատը...

Զլինի՞ թե ինքը արդեն կորցրել ե հոգեկան հավասարակությունը։ Բայց չե վոր ինքը ընդամենը չորս տարի առաջ նույն այս վորջում հարյուրներ և շղթայակապ վուներով արգելափակել... Իսկ հետո զուրս բերել ե... այնտեղ կողքի մայլասես ապառաժներից զոյցածփոքրիկ բացատում՝ գնդակի տվել։

Ավելի լավ ե ժամանել այդ մասին։

Ինչպես... նա գնդակի յե տվել նրանց, կարմիրներին... Յեկ հիմա ընկել ե նրանց ձեռքում։ Միթե սա ամեն ինչ չի ասում։

Ինչու նա մինչև այժմ այդ մասին գլխի չեր ընկել։ Միթե յերեկվա լոյսի պես պարզ չի վախճանը,

ինչ. Նա մեռնելու յեւ

Վախկոտ, վողորմելի փոքրոգի, Վորտեղից են գալիս այս  
մահվան նախաղգացումները:

Նա կանգնել եր նորից իր զնդանի մեջտեղում, աղոտ  
ելեկտրալույսի տակ, գլուխը յետ ձգած, մատները ջղաճո-  
րեն սեղմած ատամներին: Նա կարծես ուզում եր խեղդել  
ճիշը, զսպել իր ներքին աղմուկը՝ թիչ հետո նրա վողջ ձըդ-  
ված կերպարանքը մերկացավ, և նա գլխահակ ու դանդաղ,  
մտածության ծանր բեռի տակ, մոտեցավ իր ծղնոտե անկող-  
նուն և նստեց: Արմունկները հենելով ծնկներին և գլուխը  
ձեռների մեջ առնելով, նա սկսեց վոտները համաշափ շար-  
ծել, կարծես կամենալով իր մտքերը վորոշ չափի և ոիթմի  
մեջ դնել:

Ճիշտն ասած առայժմ սարսափելի վոչինչ չկա: Ինարկե  
սրան բոյլեկիները վոչ կխնայեն, վոչ կխղճան, բայց այդ  
չի, վոր պիտի վորոշի իր բախտը: Նախ՝ պիտի աշխատել  
փախուստը կազմակերպել — կաշառք, դես-դեն, — նա լավ  
զիտի այդ ճանապարհները, հետո... Ապստամբությունը...  
Հեղաշրջումը... ամենազլխավորը: Այդ ամենից ավելի հաս-  
տատ և ապահով եւ: Բայց ուրիշ միջոց ել կա: Իր փեսին  
կխնդրի... Մի կերպ... Ինչ արած: Չե վոր նա իրեն պարտա-  
կան և շատ բանով: Հիմի հերթը նրանն և պարտահատույց  
լինելու: Ասենք նա այնպիսի վախկոտն և վորո... բայց և այն-  
պես, ինչքան չինի իր փեսեն ե, — Անդրյաւշը: Մի ժամա-  
նակ իրար հետ ինչեր են արել Պետերբուրգում ուսանելիս:  
Անդրյանը... Կալաձեն, Նա ինչքան չինի: — աչքի ընկնող  
խորհրդային գործիչ ե, կապեր ունիտ...

Լույսը հանգեց, շուրջը ամեն ինչ լուծվեց մոայլ անթա-  
փանց խավարին: Ուր անհետանում են գույները, այնտեղ  
հարություն են առնում ձայներն ու հնչյունները և բան-  
տարկյալը զնդանի խավարում լսում եր ներքեն, խորը ձո-  
րում դայլալող ջրերի կարկաչը, վորոնք այդ բաց ազա-  
տության մեջ, ամառվա ասաղազարդ յերկնքի տակ, իրենց  
թափ առած զվարթ վազքով, հիշեցնում եյին իր ն ազատու-  
թյան գեղեցկությունը:

Զրերի աղմուկի որորի տակ նա վերջապես նիրհեց:

Առավոտյան զգուշորեն բացվող դռան զնգոցը նրան մի  
վայրկյան արթնացրեց, ավելի շուտ սթափեցրեց իր նիրհեց:  
Նա վոչինչ չնկատեց շուրջը, և չհասկացավ նոյնիսկ թե ուր  
ե ինքը, — շուրջը դեռ ևս տիրում եր լոին կիսախավար:  
Զգալով ծանր հոգնություն իր վողջ մարմնում և ինչ-վոր  
մշուշ իր գլխում, նա հասկացավ վոր պետք ե քնել և լավ  
քնել: Բայց նա չեր կարողանում լավ քնել նրա նիրհը  
շատ անհանգիստ եր և աղմկոտ: Նրա դեմքը մերթընդմերթ  
աղավալզվում եր ինչ-վոր ներքին, անբացատրելի զգացմունք-  
ների ալիքից:

... Ահա նա մոտեցավ վանդակապատ լուսամուտին: Նա  
հուժկու ձեռներով ցնցեց յերկաթե պիրկ հազրած վանդա-  
կապատը և... հիանալի բան... ըոլոր յերկաթե ձողերը փթած  
փայտերի պես կոտրտվեցին: Լուսամուտը բաց ե... Այդ  
յերեի յերազ կլինի, թե չե ինչպես կարող եր նա ջարդել  
յերկաթը: Բայց գուցեց յերազ չի: Ախր յերկաթները ժան-  
դում եյին և կարող եյին հեշտությամբ բեկեկվել:

Յերմագ ե թե վոչ, — նա հիմա կիմանա: Պիտի բարձրանալ,  
այ, հասնել լուսամուտի գողին և ապա ցած մագլցել: Նա  
ուզում ե բարձրանալ, բայց վոտները ծանր են, ճիգ ե գործ  
դնում, բայց վոտները չեն հնազանդվում: Սա ինչ բան ե:  
Նա կատաղում ե իր թուլության դեմ: — պիտի բարձրա-  
նալ ա-պամ...

Մթափվեց և վեր թուավ քրտնքում խաշված: Յերազ եր:  
Վանդակապատը իր տեղումն եր և իր ամրակուռ գծերով  
առավոտյան կապուտակ յերկնքի մի կտորը նա բաժանել  
եր 12 հավասար քառանկյունների: Նա սկսեց հաշվել նրանց  
վերից վար և աջից ձախ և անգիտակցարար կրկնեց —  
ստայերկուծ:

Բայց դեռ ամեն ինչ կորած չե: Դեռ կա մի հույս: Ախր  
նա մինչև հիմա չի յել փորձել այդ յերկաթների ամրությունը:  
Դուցե այդ մղավանջային յերազը մի ներշնչում եր վե-  
րուստ արված, ինչպես այն հին վրացական ավանդության  
մեջ... Սուրբ Գեվորգի մասին...

Պետք եր մոտենալ և ամբողջ ուժով ցնցել վանդակա-  
պատը, բայց նա չեր համարձակվում այդ անել: — Իսկ յեթե

հանկարծ վոչինչ դուրս չգո, իսկ յեթե հանկարծ դա մի գտատրկամիտ յերազ լինի, մի ծաղր իր գեմ... Ավելի լավ ե սպասել: Սպասել — այդ ավելի ծիծաղելի յեւ Ռուբենն նա խոկապես հույս ունի իր յերազի վրա: Հիմար, հիմար յերեխա:

Նա վեր թռավ տեղից, թմբը պարզեց դեպի լուսամուտի ձողերը:

— Զը՞նգ... Դուռն եր, նա վախեցած ձեռները իջեցրեց և յետ դարձավ, կարծես բոնված մի հանցանքում:

Բանդապահն եր. նա բերում եր իրա առավոտյան նախաճաշը:

— Հը... Չես կերել, համով չեր, — մըթմթաց նա հավաքելով յերեկոյան բերած ճաշը, վորն անձեռնամխելի յեր ժնացել — Մեղ մոտ ես ե, — ուզում ես կեր, չես ուզում հեչ, — շարունակեց նա և մի քննող հայացքով դիտելով իր բանտարկյալին, դուրս գնաց կըկնելով... — Չես ուզում հեչ...

Հենց վոր նորից զընգաց փակվող դուռը, նա դողդոջուն թները պարզեց դեպի լուսամուտը, բոնեց կողքի յերկու ձողերից և իր ամբողջ կարողությամբ ցնցեց յերկաթե ծանր գանդակապատը...

## ՆԱ ԽՈՏԱՑԱՐԱԿ ԵՐ

Մեղանում դեռ կան այնպիսի միամիտ ապուշներ, վորոնք կարմիրներին հիմարների տեղ են գնում,

(Սպիտակների մի լրագրեց).

Ժամեր անցան, յերբ նորից աղմուկով դուռը շառաչեց և բանտարկանը յերկու սպառազինված զինվորների հետ ներս մտավ:

— Հարցաքննության:

Նա մեքենաբար վեր կացավ ծնդոտի անկողնուց, վորի վրա նա յերկար հևացել եր: Հարցաքննության, նա այդ մասին իսկի չեր մտածել: Զարմանալի յեւ թի ինչու: Միթե չգիտեր վոր դա կատարվում ե միշտ և ամենուր:

Առենք նա իր ժամանակին, շատ ել հաշվի չեր նստել այդ ձեռականության հետ: Ինչ հարցաքննություն այն բոյլ:

Չեիկների, վորոնք գիշերով հարձակվեցին քաղաքային վարչության և կամենդատուրայի վրա:

Իսկ հիմա՝ հարցաքննություն, նա լավ գիտի, վոր ամեն մի աղնիվ քաղաքական հանցավոր, նման դեպքերում պահպանում ե անդավաճան լրություն և պատասխանում ե միայն չչիտեմ: Ինքը նույնպես այլ կերպ չի կարող վարվել, թեպետ... ով գիտի գուցե դա անհեռատեսություն լինի: Նրանք վայրենի մարդիկ են և կարող են առանց յերկարացնելու գնդակի տալ իրեն: Գուցե լավ կլինի ավելի խոհեմ վարվել:

— Դե շնուտ. ինչ եք կորցրել — ինչ եք ման գալիս:

— Յես... գլխարկս...

— Ձեղ բերին առանց գլխարկի, — պատասխանեց բանտապահը կծու հեգնությամբ:

— Առանց գլխարկի յել յոլա կգնաս. առաջ ընկիր:

Այս կոշտ և կտրուկ տոնը նրան սաստիկ ջղայնացնում ե:

— Միննույն ե, վոչինչ չեմ ասելու, վոչինչ չգիտեմ, — ասում ե նա, ատելությամբ լի հայացքով չափելով իր խոսակցին:

Զինվորը քմծիծաղ տալով ապա մոտենալով նրան, առաջ երեց ասելով:

— Այդ մասին կասես այնտեղ, ուր վոր հարկն ե, — հայդաւ:

Դուրս յեկան հսկայական բանտի կիսախավար քարակուում միջանցքը, վորը նեղ եր ու յերկարածիք և իր բազմաթիվ դռների խորշերով սաստկացնում եր բանտարկին ընդհանուր մոպյլը:

Հարցաքննություն յերեքն եյին, Նրանցից յերկուսը յերկում եր վոր վրացիներ եյին, յերկուսն ել քաղաքացիական զգեստներով, մյուսը, — զինվորական զգեստով և շեկուս եր: Բանտարկյալը նրա վրա հառեց իր աչքերը և նրան թվաց, թե զլխավոր վտանգը նրանից ե գալու:

Նրան նստեցրին կարմիր մահուդով ծածկված սեղանից պատշաճ հեռավորության վրա: Նրա ներս բերելը վոչ մի առանձին տպավորություն չթողեց հարցաքննիչ կոլեգիայի վրա: Նրանք ցած ձայնով իրար հետ խոսում եյին և խորհրդակցում:

— ԶԵ, պիտի սկսելու թե չե չենք հասցնի եսոր: Ահազին գործեր են կիտվել — ասաց մե ըլուղով, ոճիքի կոճակներն արձակ մի քննիչը դիմելով մյուսին, — վորը շարունակ կարգի յեր բերում իր մեծ հաստ բեխերը և մերթ լնդմերթ ձեռքը մեքենաբար տանում եր սեղանին դրած զանգին, առանց իւարկե զանգահարելու:

«Նախագահը կլինի» մտածեց բանտարկյալը սրտի դողով, լավ վոր վրացի յե:

— Ասում եմ քիչ ել սպասենք՝ Սանդրոն դա, — պատասխանեց նա նորից ձեռքը վերցնելով զանգը:

— Դե տեսնում ես վոր եկողը չի: Վորին հասնի: Ասա վոր մենք սկսում ենք, — գալու յե՝ դա, — ենպես չի, դարձավ նա դեպի ոռու զինվորականը ոռուերեն, — սկսենք մինչև Սանդրոն կդա:

— Ա ԿՏՕ-ՋԼ յեղավ նրա կարճ պատասխանը:

— Լավ. մեկ ել զանգահարեմ, — ասաց զանգը դեն տանելով խոսակիցը և սկսեց պտտեցնել ավտոմատի շրջանակը:

— Սանդրո՞ ես չեղավ ե. Սաքավելու գործն ենք սկսում, շուտ արա յեկ, վահ... Ախր չենք հասցնի յե... են վախտը կսկսենք մինչև դաս... տղերքն են ասում: Լավ, — նա դարձավ դեպի կոլլեգաները և ասաց, — սկսենք: Ապա զանգը տվեց: Ներս մտավ անջուք արտաքինով մի զինվորական, ձեռքին դեռ թաց գըիչը:

— Սկսում ենք. — Թուղթ վերցրու, նստիր:

Սկսվեց յերկարատև մի ընթերցում, — կազմված նախական հարցաքննության հիման վրա: Սաքավելին արսափով եր լսում այդ բոլորը: Նա նոր հասկացավ, վոր հիմարաբար շատ բան և ասել քննիչին: Ընթերցումը ավարտվելուց հետո կոլլեգաները, նորից սկսեցին փոխանակվել իւրար հետ մի քանի շշուկներով: Նույն բոպեյին յերեքն ել դարձան դեպի պատուհանը: Դրսում լսվեց ինչ վոր մոտոռի հախուռն մի ժխոր և փոշու հսկայական ամառի մեջ կորած մի մոտոռ, նույն վայրիյանում մտավ բերդի բակը:

— Սանդրոն ե, — յեկավ, — շշնջացին կոլլեգաները, դուռը թափով բացվեց և քրտինքի մեջ կորած, կարմրատակած մի մարդ ներս մտավ: Տիրող ընդհանուր լուսթյան, զինվորա-

կան խստիվ լրջւթյան և ընդհանուր լուսթյան մեջ նրա յերեալը այնքան անսպասելի յեր, ինչքան անամպ յերկնքում կայծակի փայլատակումը: Նա մոտեցավ վոտքի կանգնած ընկերներին և զույգ ձեռներով սկսեց նրանց ձեռները սեղմել: Աթուները իւրար խառնվեցին, զանգը գետինն ընկավ զվարթ աղմուկով, զինվորականը չկարողացավ իր ծիծաղը զապել և ակամա հիշեց կովկասցիների տաքարյունության և տեմպերամենտի մասին տարածված բազմաթիվ ասացվածքները, վորոնք նա մի ամիս առաջ լսում եր Մոսկվայում, — այստեղ գործուղվելու նախորյակին: Ժպտացին նաև մյուս յերկուսը, կարծես ասելով նրան, «տեսնում ես մեր Սանդրոյին»:

Ընդհանուր աղմուկի մեջ վոչ-վոք չնկատեց այն խնդակցությունը, վորը վառվեց Սաքավելու դիմքին: — Ախր դա Սանդրոն եր, իր դպրոցական նստարանի ընկերը, — այն ել ինչպիսի ընկեր, նա սկսեց լարել իր հիշողությունը և փրնուրել այնպիսի դեպքեր, վորոնք հաստատելին նրա և Սանդրոյի անցյալում յեղած արտակարգ մտերմությունը: Խնչպես չե, — ախր դա են Սանդրոն ե, վորը յերկու անգամ պաշտպանեց նրան իր դպրոցական թշնամիների ծեծից, — նա հիշեց նաև ինչ վոր աղջկա, սիրահարության պատմություն, կապված իր թե՛ նրա հետ: Բայց մի բան պարզ եր, վոր Սանդրոն իրեն նվիրված ընկեր եր, նման այն մարդկանց, վորոնց մասին նա սիրում եր հետագա տարիներում պարծանքով ասել, կրկնելով իր հոր՝ կնյազ Սաքավելու խոսքերը:

«Իսձ համար վոր ասեմ — ջուրն ընկի՝ ջուրը կընկնի»:

Այս, դա հենց նույն Սանդրոն եր: Արդեն տասնեւինդ ձիգ տարիներ չե՞ր տեսել նրան: Նա չավարտեց դպրոցը, մտավ ինչպո՞ր գործարան, ապա նա իմացավ նրա բոյլեկի լինելու մասին 20 թվին ինչպո՞ր մեկից... ումի՞ց արդյոք: Այս, հա, նա ամեն ինչ հիշում ե... քույրը...

Հարցաքննության վերսկսումը ընդհատեց նրա մըտքերի թելը:

— Ո՞ւմ հետ տեսակցեցիք դուք այստեղ գալուց անմիշապես հետո, — հարցը կախտ ձայնով նախագահը. զույգ ձեռները դեպի բեխերը տանելով:

— Քաղաքական գործերով... վոչ մեկի հետո Իսկ այս-  
պես... Մի տիկնոջ մոտ, ծանոթի... հետաքրքիր չի ձեզ:  
— Ի հարկե, ի հարկե, — ուրախ գլխով արավ Սանդրոն  
միշտ ժպտալից և զվարթ, մի քիչ թեք նայելով նրա վրա:  
— Գործով վոչ վոքի հետո Հաստատում եք:  
— Այս:  
— Իսկ Բաթումում:  
— Նույնպես... Աննշան ծանոթների հետ միայն...  
— Բաթումից ուղիղ այստեղ յեկաք, վոչ մի տեղ չի ջանք:  
— Վ-ոչ: Ուղիղ յեկա:  
— Ում կողմից ուղարկվեցիք դուք արտասահմանում:  
— Հարցը շփոթեցրեց նրան. քիչ լուսաթյունից հետո նա  
պատասխանեց.  
— Ինձ վոչ չեր կարող ուղարկել: Յես ինքս յեկա:  
— Նպատմկը, — վրա տվեց Սանդրոն:  
— Նպատակը... ընհանրապես... ծանոթանալ...  
— Նա մի քանի անգամ շեշտել ենախնական ցուցունք-  
ներում և այստեղ ել պնդում ե, վոր յեկել ե բացառապես  
ծանոթանալու Վրաստանի ներկա վիճակի հետո:  
— Ախ այդպիս, — հարցրեց Սանդրոն իր լայն աչքերը  
անմեղ հարցասիրությամբ հառելով նրա վրա:  
— Այս. բացառապես ծանոթանալու համար, — պատաս-  
խանեց մեղաղյալը սիրո առնելով այդ տոնից: Հասկա-  
նալի բան ե: Այնտեղ կտրված յերկրից մենք չեյինք կարող  
իմանալ ինչ ե կատարվում հայրենիքում:  
— Բայց չե՞ վոր դուք շաբաթը մի անգամ ձեր որդանում  
մանրամասն տեղեկագրեր եյիք տպագրվում հավաստի աղ-  
բյուրներից», — ինչպես գրում եյիք դուք, — հարցրեց մինչ  
այդ լուր անհամբեր կոլլեգան, վորը ամբողջ հարցաքննու-  
թյան ընթացքում այնպիսի վրդովմունքի մեջ եր զգում  
իրեն, վոր արձակել եր բլուզի բոլոր կոճակները:  
— Յես ժուրնալիստ չեմ, վոչ ել խմբագիր:  
— Ի՞նչ պրոֆեսիայի տեր ոք, — հարցրեց նորից զի՞նվո-  
րականը:  
— Զի՞նվորական եմ:

— Ախ այդպիս, — հանկարծակի վրա տվեց Սանդրոն, —  
յերեի ավարտել եք վորեն ուզմական ակադեմիա:  
— Վո՞ն. ուզմական վորեն կրթություն չեմ ստացել:  
— Ֆրանսիայում ել:  
— Նույնպես և Ֆրանսիայում... վորքան հիշում եմ...  
Да-ա! — Զգեց Սանդրոն, — զարմանալի սուտիկ լրագր-  
ներ ունեք դուք, Նրանցից մեկում յես կարդացի այն մա-  
սին, վոր դուք սպիտակ-գվարդիականների կազմակերպած  
ուզմական ակադեմիայի ինչ-վոր հանդեսում, վորպես...  
— Հա, հիշում եմ... դա պարզապես թյուրիմացություն  
եր: Ռեկամի նպատակով եր արված:  
Այսպես մի փոքր ել շարունակվեց հարցաքննությունը,  
և մեղաղյալը առաջ եր գնում հարցերի տարափի տակ,  
ամեն ինչ բացասելու ճանապարհով, մինչև վոր հարցերն  
ընդհատվեցին Սանդրոյի միջամտությամբ:  
— Ենդիրը պարզ ե, պետք ե ընդհատել հարցաքննու-  
թյունը: Հետո բարձրանալով, նշան ավեց մեղաղյալին  
դուրս տանել, ապա թափով հանելով և դեն նետելով կաշվե  
բաձկունը, նա նորից նստեց:  
Սկսվեց խորհրդակցությունը:

### ԽՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

— Ի՞նչ կասեք սրան, — հարցրեց Սանդրոն, փորձող հա-  
յացքով զննելով ընկերներին:  
— Շան պես չքմեղանում ե ամեն բանում, — կարծում ե  
թե խարվող գիմնազիստկաներ ենք...  
— Պատք եր հարցը պարզ դնել, — կամ անկեղծ խոստո-  
վանիր արածներիդ և իմացածիդ մասին, կամ յեթե չե՞  
գնդակահարելու յենք, — վրա բերեց տաքարյուն կոլլեգան,  
վեր կենալով տեղից և վրդովմած ման գալով:  
— Գնդակահարելու միշտ ժամանակ կունենանք, — ասաց  
զի՞նվորականը, մտաղբաղ հայացքը հառած սեղանին: Գլխա-  
վոր խոնդիրը հիմա կայանում ե նրան ոգտագործելու մեջ,  
Դա իմ կարծիքն ե. դու ինչ ես կարծում Սանդրո...

— Կարտ-թլանց. համաձայն եմ քեզ հետ, ԱՇ, եսոր մինչ-  
ք եստեղ գալս զբաղված եյի յերկու ուրիշ եսպիսի պտուղ-  
ներով։ Ելի եսպես ուզում են ոյխններ խաղալ։ Յես ել  
հավատալու յեմ տալիս, ասում եմ թող փշեն, ինչքո՞ն ֆան-  
տազիաները զոռ ե տալիս։ Սրանք իրենց թերթերում են-  
քան սուտ են թիել, վոր վերջը իրենք ել են սկսել հավա-  
տալ իրենց փշոցներին։ Կարծել են, թե են ե, հենց վոր  
վոտքը ցամաքը դնեն Ազգային զգարդիան կազմ ու պատ-  
րաստ, սիմնների ուժով իրենց իշխանության գլուխը կդնի։

— Նապոլեոնի դափնիները նրանց հանգիստ չեն տալիս։

— Հա-հա. իսկը Նապոլեոններ են յերևակայել իրենց. յես  
պատմությունը քիչ զիտեմ, բայց լսել եմ, վոր եղ շան վոր-  
դին Ֆրանսիա վոա դնելու պես կարողանում ե նորից հա-  
մախմբել իր ուժերը և վերահռչակվել կայսր։

— Հարյուր որով։

— Հա. բայց յես կարծում եմ, վոր 100 ժամով ել նրանց  
շարժմանը հանդուրժել — հանցավոր թուլություն կլինի։  
Նրանց ուժերը չնշին են, իսկ միակ ապավենը անասիկ  
լեռներն ու ծերպերը։ Տեղական կազմակերպությունները  
թույլ են յեղել և չեն կարողացել վոչ մի դիմադրություն  
ցույց տալ, — այդ բավական չի, խուճապ են ստեղծել և  
սկսել տարածել ամեն տեսակի չափազանցրած լուրեր։ Առա-  
վոտյան հեռագիրները արդեն տալիս են միանդամայն նպաս-  
տավոր հաղորդագրություններ։ Ն գունդը այսոր տեղումը  
կլինի և կսկսի իր գործը։ Առաջադրված ե ամենակարճ  
և հարվածային ձեռով ջախջախել և լիկվիգացիայի յենթար-  
կել շարժումը, վորովհետեւ ձգձգումը կարող ե ուժ տալ նոր  
պրովակացիաների և խոռվությունների ուրիշ զյուղերում։  
Ընդամենը յերեսուն ժամ հազիվ ե անցել, բայց արդեն  
քաղքենիությունը խոսում է ել անգլիական աերոպլանների,  
ել Փրանսիական ողային եսկաղղիլիայի մասին։ Գլշերս  
քոնվել են մի քանի ուսանողներ, վորոնք ուզեցել են պրո-  
վակացիոն թառոցիկներ տպագրել և տարածել։ Հանաք չի.  
մարդիկ ուեալ հույսեր են կալում այս շարժման հետ...  
Հա. ասելս ինչ եւ են, վոր ես բռնվածներին պիտի թափ  
տալ ենքան, մինչև վոր նրանք ամեն ինչ խոստովանվեն և

մեղալի գան։ ԱՇ, ընկեր Սոկոլովը մի հարց տվեց —  
«ումբից եք ուղարկված այստեղ»։ Գլուխս կտամ, յեթե եղ  
շունը Փրանսիական ու ըրիտանական հրամանատարու-  
թյուններից հանձնարարություններ ու հրահանգներ չունին  
եղ բոլորը ջրի յերեսը պիտի հանել և զակունենա մեծ քա-  
ղաքական նշանակություններ իսկույն կերեա, վոր «Ազատ  
Վրաստանի» հերոսները անտանտայից վարձված ագենտներ  
են։ Ել զբանից հետո քաղքենիների վոռնոցը այն մասին,  
վոր բոյլշիկները նոր գաղանություններ են կատարում,  
նոր վրացի հերոսներ են գնդակում, — քոռ գրոշ չի արժենաւ։

— Եղ բոլորը լավ ես ասում, — տիրող լոռի թյունից  
հետո ասաց մեկը, — բայց վոնց ես դու պատկերացնում եղ  
Ջրի յերես հանելը, քանի վոր ես սրիկան սիմուլյանտու-  
թյուն և անում և վոչինչ չի ուղում խոստովանվեր։

— Համբերի... կխօստովանվին, հենց վոր հասկանա,  
թե ինքը ինչ պայմաններում ե գտնվում և ովքեր են այն  
ուժերը, վորոնց վրա նա հենվել ե կամենում։ Եստեղից ել  
պիտի բռնեցնել։

## ԵՐ ԺԱՄԱՆԱԿ...

...ժամանակը յերբեմն իրա գեմ ուրիշ եր  
նա քծնում եր նրան ու հաճոյանում..

...Հավատարիմ այն շանն այժմ ինչպես չէին եր  
նրան, վոր տալիս ենք ժամանակ անուն։

Նա թեթևացած, խոր շունչ քաշեց և մի նուրր ժպիտով  
ժամբու դրեց յերկու զինուրներին։ Զնդանի անհրապույր  
մուայլը ասես չքացել եր։ Արեի մի փոքրիկ և նեղ շեղջ նետ-  
վել եր ամբողջ հատակով։ Նա սկսեց այդ շեղջով յետ ու  
առաջ անել, մերթ ընդ մերթ կկոցած աչքերով զիտելով արելը

Կյանքում առաջին անգամ նա կարոտ գրաց դեպի արելը  
քանի վոր առաջին անգամ զրկիլել եր նրանից։

Այդ առաջին զրկանքը պիտք ե վոր վերջինը լինի։ Այդ  
հիմա անկասկած ե, Նրա նուրր և մի փոքր անթափանց  
ժպիտը կամաց-կամաց լայնացավ և վողողեց ամբողջ զեմքը։  
Միրուքն ու բեխերն անգամ դրանից աճեցին և բարձրա-

շան։ Այդ գոհ, ինքնավստահ կոյազի լպիրշ ծաղըն եր՝ հայտնի չի թե ում հասցեին։ Թիչ հետո նրա ուսերն ու բեխերը տեսնդորեն ցնցվում եյին ինչ վոր մանր գողոցով։

— Խի-խի-խի-խի... Զսպված ծիծաղը զալարում եր նրան։ Հրաշալի յեւ Ամեն ինչ պարզ, հասարտի. վեր և կացել, ողղակի յեկել այստեղ ծանոթանալու, իսկական կացությունը իմանալու, իսկ յեթե հավանի նաև մնալու համար։ Այնքան համողեցոցիչ և տրամաբանական։

Դե ուրիշ կերպ կարժղ եր լինել։ Իսկ նա հիմարը յերեկ գիշերը... Ֆի... ընդհանրապես ինչ բան ե մահվան սարսափը։ Կանացի նվաստացուցիչ մի զգացում, — անասնական մի բնաղդ։ Իսկ զինվորականը, այն ել իր նմանը, կարժղ և միթե ունենալ այդ զգացումը։ Ժամդ հասել ե՝ մեռիք հերոսի պես, իշխանի պես՝ կամ թեկող սոցիալիստի պես։ Քիչ են յեղել հերոսական մահով ընկած սոցիալիստներ։

Նա ուզեց հիշել մի քանի անուններ, բայց դրա փոխարեն հիշեց, վոր իր հիշողությունն ել բանի պետք չի և ապա իսկույն հիշեց իր փեսին, վորը անշուշտ պետք և այցելեր իրեն, բայց դեռ չկար։

Յերեկ նա տմբողջ հույսը դրել եր նրա՝ Անդրյուշի վրա։ Միանգամայն իդուրը։ Իր հոյսը ինքն ե և իր առողջ դատողությունը, վորով կարողացավ այդքան հաջող դուրս պրծնել հարցաքննությունից։ Մնացածը հեշտ ե։ Ինքը հայտնի աղքային գործիչ, սոցիալիստ, նույնիսկ II ինտերնացիոնալի կողմից վորոշ հանձնարարություններով և գործուղագրով, — յեկել և ծանոթանալու ընդհանուր կացության հետ։ Արդյունքը։ Արդյունքը բավական գոհացոցիչ ե։ Պետք և խոստովանվել, վոր բոյշեկները ավերելուց և քանդելուց բացի... շինել ել գիտեն։ Յերկիրը այնուամենայնիվ շնչում ե։ Թեպետ աղգային կուլտուրայի ասպարիզում կան մի շարք խոշոր թերություններ... Նու, մի խոսքով նա հիմա բոլորովին այլ կարծիքի յեւ Խորհրդային Վրաստանի մասին։ Պրծմնք։ Մնում ե կրանից հետո գործել։ Գործել, Այնտեղ լեռներում և ծերպերում համախմբվող իրենց ուժերը նշանի յեն սպասում։ Կայծը կարող ե կարճ ժամանակում վերածվել մի կատաղի հրդեհի և ճարակել վող յերկիրը։ Յեկ այն

ժամանակ, ինչպես մյն յերբեմնի որերում նստած սպիտակ նժույգին, նա աղղային գվարդիայի հեծելազորի գլուխը կանգնած կշարժվի թիֆլիսի վրա։

Պետք եր հենց հիմիկվանից հեռաղբել կնոջը՝ Տելլային, վոր թողնի Փարիզը և մամբա ընկնի։ Այստեղ, այն խայտառակ մթնոլորտում, հազար ու մի սպաներով ու ֆրանտներով շրջապատված... թուն։ նորից նրա արյունը պղտորվում է։ Խանդը նորից հոչոտում և նրա սիրտը։

Ինչպես հիմա նա հիշում ե իր և Տելլայի առաջին հանդիպությունը, ապա համբույրներն ու գրկախառնությունները։ Շուտով գեղաքերի հոսանքը նրան բարձրացրեց կյանքի բարձրացող ալիքին։ Այդ շրջանում ե ահա, վոր նա ձեռք և բերում ամբողջ քաղաքում ահագին ժողովրդականություն։ Նա հիշում ե Սպային գվարդիայի կազմակերպությունը և այն հանդեսը, վորը տեղի ունեցավ այդ առթիվ։ Այդ շրջանում նա, իդուր կինվորականությունն առիթ չունեցավ վորեւ պատերազմում հանդես գալու և վորեւ հերոսական սխրագործությամբ փայլելու, բայց բոլորն ել զիտեյին, վոր իր վրացի տոհմական յերակներում վառվում ե իսկական հերոսի և զինվորականի արյունը։ Հետո նորից Տելլան։ Նրանք ամուսնացան և քաշվեցին մի առժամանակ իրենց Կախեթիայի գեղեցիկ վիլայում։ Նա դնում եր գլուխը Տելլայի գողում և նա գուրգուրելով նրա գեղեցիկ գանգուրները, կարդում իր նրան «Ընձենավորը»։ Հետո նրանք զրուցում եյին և յերկուսն ել հաստատում եյին, վոր ժամանակն ե Վրաստանին նորից վրտքի յեկել իր նախկին հզորությամբ և փառքով։ Ժամանակն ե նրանց նորից ունենալ մի ուժեղ միապետ, վոր կարողանա յերկրի սահման իր ձեռքը վերցնել թե չե այդպես բանվորներին և զյուղացիներին յերես տալով մեր կիանեն։

Հրաշալի Տելլա! Նա գեռ այն ժամանակ արդեն գիտակցում եր, վոր այդպես գնալով յերկիրը կհասնի բոյշեկումն։ Յեկ նրանք իրենց սրտի խորքերում թագուն, առանց իրար ասելու, գիտեյին թե ովքեր են արժանի յերկրի միապետ-միապետուի լինելուն։ Ով և ասում, թե միապետությունը՝ հետազիմական պետական սիստեմ ե։ Աշխարհի

ամենալուսավոր և հզոր պետությունը — Մեծ Բրիտանիան  
չէ վոր միապետական ե...

Հետո՞ հեռագիր. — շտապ ժամանել մայրաքաղաքը, Յերկիրը ալեկոծվում եր, յերկիրը փոթորկվում եր: Դուշեթը վոտքի յեր կանգնել բանվորները գործադուլներ եյին կազմակերպում: Սկսվեց ծանր զինվորական կյանք, ծիու վրա, այստեղ-այնտեղ: Ինքը թեալետ անմիջականորեն չեր մասնակցում տեղի ունեցող ընդհարումներին, բայց և այնպիս միշտ զգում եր կյանքի անապահովությունը: Նա գիտեր, վոր իր կյանքը պետք ե խնայել ավելի մեծ գործերի համար և այդ պատճառով խնդրեց մինհստրությանը նշանակել իրեն քաղաքի գարնիզոնում: Սյստեղ ավելի հեշտ եր և լի եթի կտորով: Սյստեղ նա գլուխ բերեց բազմաթիվ մասսայական ձերբակալություններ և գնդակահարություններ:

Նա սիրում եր հաճախ ներկա լինել, կամ նույնիսկ անձամբ իրագործել տալ մահվան պատիմը: Նա հիմա յել լում ե իր վորոտալից ձայնը, —

— «Կըա-կիր»...

Եեկ նրանք ընկնում եյին ատելության, վոխի, ցասման մի ամենի զգացմունքով...

Նա սրսիաց վողջ մարմով:

Եեկ նա հույս ունի այս բոլորից հետո գլուխը վճղջ պըծացնել այս տեղից...

Զարհուրելի յե: Լավ ե չհիշել...

## ՅԵՐԿՈՒ ՎՐԱՍՏԱՆ

Շատ աեսակի նոր Կոլումբոսների մասին և խոսված ու գրուված, բայց ամերիկացի Կոլումբոսի մասին՝ յերեմք...

...Զե. փոքրոգություն ե յերկնչելը: Սրան քաղաքական կյանք կասեն: Յերեկը — յերեկ եր, եսորը՝ եսոր: Շատ ջրեր են հոսել են որերից, շատ բաներ փոխվել: Ո՞վ չի հասրկանա, վոր այն պահաններում, վորում գործել ե ինքը, առանց արյան ու գնդակի չեր կարելի յերկիր կառավարել: Զե. վոր իրենք, բոյլշեկիներն ել քիչ չկոտարեցին այն որե-

րին, յերէ իշխանությունն իրենց ձեռքն անցավ: Բայց յեթե կա Պատերազմ, կա նաև Խաղաղություն: Հիմիկվա յերկրում ստեղծված անդորր պայմաններում ինչ ել լինի, նրանք չեն հանդգնի... արյուն թափել:

Վերջապես կա հասարակական կարծիք, կա Յեվրոպա... սոցիալիստական ինտերնացիոնալ վերջապես:

Բայց յեթե հանկարծ նրանք, ապատամբության պատրաստվողները սկսեն իրենց գործողությունները... ավելի շուտ քան նա կկարողանա դուրս պրծնել այս զնդանից... Յեթե նրանք արդեն սկսել են գործել... Այն ժամանակ ամեն ինչ կորած կլինի: Ամեն ինչ կբացվի որը-ցերեկի պես: Նա յեկել ե ապատամբական շարժումը ղեկավարելու... Խորհրդային իշխանության դեմ... Նա, — բոյլշեկներին գնդակահարող և վոչնչացնող Սաքավելին, — վորի վրա ատամներ են կրծտացնում հարյուրավոր բոյլշեկներ ու կոմոմուլիստներ:

Նա յերբեք չի մօռանա իր ձերբակալության ըոպեն, երբ նա չեկիստների ողակում փակված, սարսափով ձեռները վեր եր բարձրացրել և հանկարծ մի վայրկյանում այն խուլ անմարդ փողոցը ասես հեղեղվեց ամբոխով, վորը կատաղի հայացքներով ճանապարհ եր դնում նրան: Չեկիստները յետ մղեցին իրենց ողակող ամբոխին և նույն ըոպեյին, յերը նրան ուղղում եյին դնել փակ ավտոն, — նա տեսավ, թի ինչպես կատաղությունից մոլեգնած մի պատանի, 18—20 տարեկան, մերկ դաշույնը ձեռքին վրա տվեց գոռալով.

— Թողեք, յես դրա... Դրա դատաստանը մենք ենք տեսնելու: Թողեք սամասուդ անենք...

Նա ավելի վոշինչ չտեսավ, բայց սլացող ավտոյի յետեվից նա դեռ լսում եր — «Սաքավելի», «սամասուդ» բառերը: Զարհուրելի յե:

Ա:ա թե ինչու յերկիրը, իր հայրենիքը, վորը կարծում եր թե իրեւ գրկարաց կընդունի, — այնքան խորթ և ոտարացած ե թվում իրեն, և այնքան թշնամական:

Վրաստան:

Սյս բառը նրա համար շատ բարձր և նշանակալից երս Սակայն այդ ասելիս նա պատկերացնում եր դալարագեղ

հովիտներ, լեռների մի խաժամութ ու գեղեցկատեսիլ ամբոխ, վերջապես գեղեցիկ և հարազատ կովկայան մայրաքաղաքը, իր հարուստ և սրտարաց առատությամբ։ Հետո նաև գեղեցիկ վրացուհիներ, կամ վերջապես կառավարուվարություն, մինիստրներ և պատկառելի առաջալ ժորդանիան։

Ուրիշ ել ինչ Վրաստան կարող եր լինել։

Բայց բանվորական այն խուլ արվարձանը, ուր նա ընկավ վրասորդից հալածված գաղանի պես, այն բանվորական մռայլադեմ թաղը, իր հնուցից կամ ծիրից թրծված հայացքներով աղքաբնակչությամբ, — բաց արավ նրա առաջ մի նոր Վրաստան, մի նոր ուրիշ յերկիր, վորին նա վոչ թե խորթ եր ու ոտար... այլ թշնամին նրանք, այդ բնակիչներն ել իրեն զիտեյին և ճանաչում եյին։ Ճանաչում և ատում։

Յեկայսրություն հետո՝ միամտություն չի փրկություն հուսալ։

Նա նորից սկսեց կրծոտել իր մատները, կարծես ճիզ գործ դնելով իր ճիշը զապել, ջղաձգորեն սկսեց ման գալ և մեքենաբար նորից քաշքան իր միրուքն ու բեկերը։

Սյան բեկերն ու միրուքը, վորոնք այնքան փոխել եյին նրա տեսքը, վոր իր մոտ ազգականներն անգամ նրան չեյին ճանաչում, — չփրկեցին նրան չեկիստի սուր հայցքից։

Յեկայնչպես նրանք հոտն առան։

Ո՞վ կարող եր իրեն մատնած լինել։

## „ԹԱԳԱՎՈՐԸ ԶՎԱՐՑԱՆՈՒՄ Ե“

«Բաթում հասնելով նրա առաջին դործը յեղավ ձեռք զարկել Վրաստանի տղատագրության մեծ գործի կազմակերպմանն ու ծավալմանը։

(Հատված սպիտակ մամուլի մի նեկրոլոգից)

Արգեն Բաթումը, — նա հասկացավ, վոր լավ և հաջող կերպով ծալուկելը, դործի հաջողության առաջին պայմանն եւ Յերեկոյան մութն ընկնելու պես նա մտավ մարդաշատ

պարկը և սկսեց լոին և զգուշավոր կերպով ավելի ամայի և յետ ընկած ծառուղիներով ման դալ։

Նա լավատերների թույլ նշույլների տակ զննում եր զբոսնողների հաղուստ-կապուստը։ Դժվար եր վորեն յեղորակացության գալը։ Բանվորների կամ նավակայանում աշխատողների զգեստավորումը չափաղանց կոշտ և անտանելի կլիներ իրա համար։ Նա յերեք չեր կարողանա վարժվել դրանց։ Զինվորական և այլ պաշտոնական համազգեստ ձեռք բերելը չափաղանց վտանգավոր եր, — նա շտապով հրաժարվեց այդ մտքից։ Առևտրական հիմնարկների և այլ տիպի մասնագետ աշխատողների զգեստավորումը չեր տարբերվում իրենից։ Նրանք բոլորն ել մաքսանենդ զգեստներ եյին հազել։

Նա արդեն վորոշեց, վոր այսպես դժվար ե վորեն յեղորակացության գալ և ուզեց ամեն ինչ հետաձգել առավոտյան և վերադառնալ այն յետ ընկած հյուրանոցը, ուր նա իջել եր։

Բայց... չափաղանց գեղեցիկ եր յերեկոն, մթնոլորտը չափաղանց հագեցած եր ինչ-վոր քաղցր հեշտագին բուրմունքով։ Յերեկոն տողորված եր մեղկությամբ և կրքի համրուց ցնցող դրով։ Նա հիշեց, վոր առավոտից վոչինչ չի կերել վոր տպավորությունների խառն ալիքը նրա ախորժակը փակել եյին։ Հշշեց, վոր նա մի քանի շաբաթ ե ինչ վոչ մի կնոջ անկողնուն չի մոտեցել, իսկ նավային ճամբորդությունը այնքան ե տրամադրում մարդուն մարմական հաճույքներին։

Կերցը մի գլշերաշրջիկ պչունու և մտավ մի վործ նրա հետ կախեթիայի մուգ գինով մի լավ ընթրեց և վողջ գիշեր նրա գրկում հագեցրեց իր ծարավը։

...Առավոտյան, յերբ նա արթնացավ, տեսավ, վոր իր զգեստները չկան։ Գիշերային այցելուներից մեկը «սիսաւմամբ» հագել եր նրա տափատն ու բածկոնը և մինչև իսկ նրա ցիլինդրը, թողնելով իրենները։

Աննկարագրելի սրտմտության և ամոթի զգացումով նա հագավ սրամիտ սրբկայի զգեստները և գուրս պրժավ վորչից։

## “ԱՐՄԻՎՆԵՐԻ” ԲՆՈՒՄ

Հետագայում նա շնորհակալության զգացմունքով սկսեց հիշել այդ անծանոթ գողին: Իր գրպաններում մանր դրամից և իրերից բացի վոչինչ չկար, իսկ ձեռք բերած զդեստները մի յերջանիկ պատահականությամբ շատ հարմար յեկան նրա վրա: Այդ գգեստներով նա նման եր մի խորհրդային ստորին կարգի ծառայողի, վորը ամենից քիչ եր ուշադրություն հրավիրում, կամ ափիլի շուտ վոչ մի ուշադրություն չեր հրավիրում իր վրա: Առանց ժամանակ կորցնելու նա հերեկիվա գնացքի տոմս գնեց մինչև Ճ... կայարանը և վերցնելով հյուրանոցից իր իրերը, վճարելով ծառայողներին, — մեկնեց Բաթումից: Նա հիմա հասկանում է, վոր հենց այդտեղ նա ճակատագրական սխալ բաց թողեց: Հյուրանոցում չեյին կարող ուշադրության չառնել նրա վերգգեստավորումը...

Ուշ յերեկոյան նա հասավ Ճ. կայարանը, մի կառք վարձեց և ուղերձեց գյուղաքաղաքարը: Գիշեր, անձրև, ցեխ: Ինչ զազրելի յերկիր ե, ինչ ասիականություն: իսկ այնտեղ, այն շքեղ հրավառված և սքանչելի քաղաքում մարդիկ հիմա դեռ շամպայն են քամում և ֆոքստրոտի հաճույքների եփիրում նվազում:

Նա իջավ այն տունը, վորի հասցեն ստացել եր դեռ Ստամբուլում: Տանուտերը մի վիթխարահասակ, պատկառելի ծերունի, մեծ հարգանքով ընդունեց նրան և առանց հարձուփորձի, կարծես ինչ-վոր նախապայմանված կարգով ցույց տվեց իր ննջարանը: Նա խոր և յերկարատև քնեց և առավոտյան վեր կենալով իսկույն ուղեւրվեց անտառը: Նրան ուղեկցում եր տանուտերի պատանի վորդին, վորը գիտեր ամեն սարքար այս լինախարհի լարիրինթում:

Անթիվ արահետներ ու շավիղներ փոփոխելուց և յերկարատև վերելքներից հետո նրանք հասան «Արծիվների բուն» կոչված լեռնագտագաթին: Յեվ այս խուլ և կորած-մոլորած մի անյունից նրանք պիտի բարձրացներին ապամբության դրոշը, նետեցին հրդեհի առաջին կայծը... Բայց ավելի անհուսալի և վհատեցուցիչ եյին իրենք,

արծիվներց, հրդեհի առաջին կայծերը: Նա այնտեղ գտավ ընդամենը հինգ հոգի: Յերկուսը գինագործներ եյին և աշխատում եյին զենքեր կարգի բերելով, մեկը կիսապուշ մի ծերունի յեր, վորը շարունակ նստած բարձր քառաժայունին հսկում եր՝ ով և գալիս-գնում, մյուս յերկուսը գինված տղերք եյին, փախած որենքից, ապավինած այս ըրնումք: Սաքավելին ի հարկե արժան չհամարեց իր ով լինելը հայտնել նրանց և սկսեց հետաքրքրվել «զործից»: Յերկու զինված յերիտասարդները իրար բերնից խոսքը խլելով նրան հաղորդեցին, վոր ուժերը շատ են, — «ենքան, վոր ասել չի լինի», բայց բոլորը ցրվել են գյուղերը լրենց հունձք ու կալին և հենց վոր նշան տրվի, բոլորն ել կհավաքվեն: Մի շաբաթ առաջ այստեղ և յեղել իշխան Ա...շվիլին: Այստեղ նա հավաքել ե բոլոր ուժերը և ճառ և առել նրան ձեռքի վրա և կաչառա են արել և այլ անիմաստ մանրամասնություններ:

- Իսկ հեր և հիմա իշխանը:
- Գնաց Թիրլիկ: Զենքի, հրացանի ճար պիտի անի:
- Հետո պիտի պլան քաշի:
- Ի՞նչ պլան:
- Թիրլիկը գրավելու պլան:
- Թոփեր գնելու տեղերն ե սարքելու:

Նա զգաց, վոր ավելի վոչինչ չի կարող իմանալ նրանցից: Մոտեցավ զինագործներին, վորոնք խմում եյին նոր կթած այծի կաթը և լսում իրենց խոսակցությունը:

- Զենքը ինչպես, շատ կատ:
- ? ?
- Ամոթ չլինի հարցնել, դուք ով եք:
- Այդ հետո կիմանաք:
- ? ?
- Ե՞ն, վոր եղածես ե, դուք ել հետո կիմանաք:

Նա զգաց, վոր սխալ կատարեց: Մինչև անգամ իր ծերունի գոռող և կամակոր հայրը վարպետների հետ, մանավանդ զինագործ վարպետների հետ հարգանքով բարեաստծու բարիյով և ձեռք թոթվելով եր գործ բանումք: Բայց նրա սրտմտությունը այնքան մնձ եր, իսկ մաղձու չարու-

թյունը և գեղի կուսակցությունը, և գեղի կոմիտեն, վորը պիտի այստեղ լիներ, բայց չկար, և գեղի ամբողջ աշխարհը այնքան սաստիկ՝ վոր նա կատաղած շուռ յեկավ նրանցից և դիմեց գեղի վայրեջքը, մըթմըթալով. «յես ձեզ ցույց կտամ, գարշելիներ»:

Նրա ծանր և հուսաբեկ տրամադրությունը մի փոքր բացվեց, յերբ վերադառնալով իր հյուրընկալի տունը, նա տեսալ յերկու ուսուցիչներին և պյուղխորհրդի քարտուղարին իրեն սպասելիս:

— Մի փոքր կսպասեք, — յես պիտի հանգստանամ:

— Խնդրեմ, խնդրեմ... Զերդ բարձրություն... ինչո՞ւ չե...

Նա լվացվեց, նիրհեց գահավորակում և զարթնելով նորից լվացվեց և ընդունեց զյուղխորհրդի քարտուղարին:

— Ապա ասեք, ինչպես են գործերը, բնակչությունը...

— Լավից ել լավ եւ եղ մասին հեշ միք մտածի: Մեծ մասը մեր կողմն եւ:

— Բոյլշէկիներն այս կողմերում զինվորական ուժեր ունեն:

— Զըթ, — չոթացրեց քարտուղարը, — քսան ձիավոր միլիցիոներ կան, — մեր կողմն են:

— Եղածու ուրեմն ամեն ինչ կարգին եւ: Մնում եւ սկսել:

— Հենց եղ եւ պիտի սկսել Քաշքան պետք չի: Այ յեթե դուք ինձ ասեցիք, թե յերբ, վար որը կսկսենք գործը...  
— Ինչի՞դ ե պետք:

— Պետք ե... ժամանակին մի քանիսին քնեցնելու համար, — և նա մորթիկու շարժում կատարեց:

— Ովքեր են այդ մի քանիսները:

— Կուսակցության և կոմսոմոլի թշիջի քարտուղարներ և մի յերկու ուրիշ կուսակցականներ:

— Հենց եղքան:

— Շատերը կան, — ահա նրանցից պիտի սկսել

— Հըմ... ելքես ել կանեք, բայց գեռ որ նշանակելու համար համբերեք: Դեռ ինձ պետք ե Թիֆլիս գնալ:

— Հրամանք ես, ձիշտ ե, — ծամճմեց նախագահը. զլուխ ավեց և դուրս յեկավ:

Յերկու ուսուցիչները սկսեցին հայրենասիրական զեղությանից, վրաց նոր սերնդի դաստիարակությունից և վերջացրին դպրոցի վարիչին և նրա սիրուհի ուսուցչունու բոյլշէկի լինելովը:

— Պետք ե մաքրել մանուկ սերնդի դաստիարակության տաճարի մթնոլորտը, — վերջացրին նրանք իրենց շաղակատառությունը:

Սաքավելին լսեց նրանց մեծ համբերությամբ և սիրալիր կերպով խոստացավ, վոր դպրոցի մթնոլորտը կմաքրվի, հենց վոր յերկրի մթնոլորտը մաքրվի:

— Ի հարկե, ի հարկե, — վրա տվին նրանք: — Մենք ել դրան ենք սպասում: Յեկ նրանք խոր գլուխ տալով, «իշխան» և «ձերդ բարձրություն»-ով մեծարելով իրեն, դուրս յեկան:

— Լավ իշխանություն ե, — յես իմ հոգին: Միլիցիան՝ մեր կողմը, զյուղխորհրդի քարտուղարը՝ մեր կողմը, ուսուցիչները՝ մեր կողմը, զյուղացիները... զյուղացիները...

Բայց չե վոր նա այս բոպեյին հանգչում և զյուղացու տան հյուրասենյակի գահավորակին...

## ՍՈՒՐԲ ՇՈՒՇԱՆԻԿԻ ԴՈՒՏՐԸ

Առանց իր անձնական ապահովության մասին հոգ տանելու, նա Թիֆլիսում սկսեց կյանքի կոչել մեր ամբողջ կաղմակերպությունը և 2-3 օրվա մեջ...

Նույն նեկը ուղարկեց

Թիֆլիսի փողոցներով դանդաղ ու մի քիչ ել շվար, չորս կողմ աչքերը հածելով, անցնում եր այն ծպտյալ պարոնը, խորհրդային ստորին կարգի ծառայողի անշուռք հանդերձանքով, և շարունակ ձեռքերով շփում եր իր բեկան ու միրուքը:

Նա կարծես հոտոտում եր ողը, մթնոլորտը և ուզում եր հասկանալ թե ինչ ե կատարվում եր շուրջը: Նա հաճախ, տրամվայում, թե ներքնատուն-ճաշարանում, այզու ծառուղիներում թե մայթերին, — ականջը ուշաղիր կերպով կախում եր և աշխատում եր վորսալ ամեն հնչյուն, ամեն խոսք: Գործնական և շատախոս այդ քաղաքը կարծես դիտ-

ժամբ քար լռություն եր պահում այն ժամին, ինչի վերաբերյալ նա կուղենար, վոր ամենքը, ամենքը ճշան:

Քաղաքային արտաքնոցում նրա աշքին ընկան պատի գրոտած և խծրծված ինչ վոր կոլեկտիվ ստեղծագործությունների նա մեծ հետաքրքրությամբ կարդաց եղիտեց ամբողջ տեքստն ու իլլուստրացիոն նյութերը և բացի անսահմանորեն ցինիկ և փողոցային խայտառակություններից, վորչնչ չգտավ մխիթարական և սփոփիչ:

— Ինչպես են գնում գործերդ, — հարցրեց նա դիտուկ և հաստափոր տրախտինուն, վորը հենց նոր նրա սեղանին դրեց գինին ու կանաչին:

— Ե՞ն ենպես, ելի, ապրում ենք, — վոչ լավ, վոչ վատու Կոպերատիվը ասում են շատ և նեղում, հը:

— Նեղում ել ե, ամա մենք մեր մուշտարին ունենք, նրանք՝ իրենց:

— Ինչ կլինի ձեր հալը մի քանի տարուց հետո, թե վոր... կոպերատիվը ասենք ուժեղացավ:

Հալբաթ մի բան կանենք: Սոված չենք մաս: Իսկի չե կոպերատիվում պովարություն կանենք: Ենքաններն են հիմի եղանակ անում ու լավ ել փող առնում...

Ըեվ ամբողջ խոսակցությունը տողորված եր յեղած կացությանը հնազանդվելու ու հարմարվելու տրամադրությամբ:

«Յես ել մարդ եմ գտել ազիտացիայի յենթարկելու» մտածեց ծպոյալը և փակեց խոսակցությունը:

Յերեկոյան նա մտավ իրենց տունը և քիչ մնաց ուրախությունից ուշաթափ աներ իր պառավ մորը: Դիշերը նա անհանգիստ քնից, յերեի նրանից, վոր մայրը շարունակ նստել եր իր սնարին և հեծեծում եր ուրախությունից:

Առավոտյան նա վորոշեց գտնել կոմիտեյի անդամներից մեկն ու մեկին և գործի գրության մասին խորհրդակցելու Բայց ինչպես գտնել նրանց: Գլխավորը այն ե, վոր պետք ե ուրիշ գիշերելու տեղ գտնել: Տանը իր պառավ մոր մոտ վտանգավոր եր և անհանձ լի: Նա նորից և նորից պիտի հարցնի կնոջ մասին և ի՛քն ել պիտի ստի և ասի, վոր ամեն ինչ լավ ե:

Այս խոհերի մեջ միշտ հանցավոր մի մտքի պես նրա դեմք եր յենում փարթամ, գեղեցկակաղմ մի կնոջ քնքուշ,

նըրանկար գլուխը, ինչ վոր կախարդիչ գաղտնիքի խորհրդով լի: Քաղցը ու մոզիչ, ինչպես կնոջ անխոս խոստումը, ակնարկում եր նրա հայացքը իր սրտում և լցնում նրա արյան մեջ ինչ վոր քաղցը, հարբեցուցիչ գինի:

Որը նա միկ երպ սղանեց տրամվայներում և տրախտիրներում, իսկ յերբ իրիկային աղջամուղջը իջավ, նա սեղմեց հնավուրց ու ծանոթ տան զանգը: Դուռը բաց արավ ուստ աղախինը, վորի անփոյթ և կեղտոտ զգեստավորումը վուշինչ լավ բան չեր ասում իր տիրունու մասին:

— Տիկին Արաշիձեն տմնն ե:

Աղախինը ուշաղիր զննելով նրա արտաքինը, բացասար գլուխը շարժեց: Նա հասկացավ, վոր աղախինը ստում ե:

— Լավ. յես կապասեմ՝ մինչև գա, — և փորձեց անցնել շեմքը:

— Չեմ թողնի. դուք ով եք:

Յես նրա հին ու մոտիկ բարեկամն եմ:

— Լավ... Միայն թե... համեցեք հյուրասենյակը:

Նա նստեց և սրտատրոփ սկսեց սպասել նրան, — իր յերեմի հանցավոր սիրո առարկա Մարիային: Նրա ամուսնուն բոյշիկիները 21 թվին գնդակեցին, և նա գիտեր, վոր կինը մինչև հիմա այրի յե մնացել: Գիտեր նաև, վոր նա ուխտ ե արել մինչև կյանքի վերջը այրի մնալ և սգալ իր ամուսնու մահը: Պարիզի վրաց բուրժուական որգանը հնկայական աղմուկ հանելով այդ գնդակահարության առթիվ, մահվան տարեղարձին այրու այդ ուխտը, հատուկ և սրտաշարժ կամենտարիաներով հրապարակեց:

Այդքան շատ եր սիրում նա իր ամուսնուն:

— Հըմ. այդ մասին թող իրեն, Սաքավելուն հարցվի:

Նա ամուսնուն չեր սիրում: ինքը յերբ զեռ չեր ամուսնացել Տելլայի հետ, նրա գրկումն եր հազեցնում իր առաջին յերիտասարդության բուռն ցանկությունները: Այդ հաւաքերությունները նա վերսկսեց իր ամուսնությունից մի տարի հետո, յերբ Տելլայի սառն ու ոսմանտիկ գեղեցկությունը սկսեց նրան ափազացն շինծու և անկրակ թվալ Մարիան նրան գրկարաց ընդունեց, զգալով իր հաղթանակը դեռ նորահարս և գեղեցկության համբավ վայելող Տելլայի վրա: Յեվ հիմա ահա նա...

Նա արթնացավ առավոտյան և զգաց իրեն շատ նվազած ու կարկամ: Ուղեղում ու արյան մեջ կարծես ալկոհոլ եր մխում: Դուրս յեկավ և դրսի թարմ ողը նրան մի փոքր սթափեցրեց: Նախաճաշելով մոտիկ կաթնատնում, — նա հավաքեց իր մտքերը և սկսեց իրեն հայհոյել այնքան յերկար և թանկապին ժամանակ կորցնելու համար:

Բայց դա դեռ քիչ եր: Հիմա, յերբ արդեն ժամանակն եր նրան ծանոթների միջոցով պրատել և գտնել կոմիտեյի անդամներին, — նա վոչ մի կերպ չեր կարողանում վորոշել՝ ինչից սկսել:

Նա դեռ գտնվում եր Մարիամի թովչանքների կախարդական շրջանակում: Նա արդեն հագեցրել եր իր մարմնական ցանկությունները, բայց ահա նա չի կարողանում մոռանալ այն, վոր այդ կինը 3—4 տարի իր ամուսնու վրա սդացել ե և մերժել լավ և ապահով կենակցությունների բազմաթիվ առաջարկները: Իր ուխտը նա դրժեց միայն իր սիրեցյալի գրկում, վորը միշտ ել յեղել եր անցյալում նրա փաստական ամուսինը:

Այս բոլորը նա լսեց իրենից, Մարիայից և իր մտքում նրան համադրեց իր կնոջ, Տելլայի հետ: Վորքան բարձր ու անմատչելի յեր մեկը, և վորքան ստորաքարշ մյուսը:

Մարիայի բարոյական կերպարանքը բարձրացավ նրա յերեակայության մեջ և հարուցեց մի ուրիշ պայծառ ու լուսաշող կերպարանք, — հին, վաղեմի վրաց պատմության մեջ հերոսացած սուրբ Շուշանիկի պատկերը, նահատակված արքայի շիրմին սպալիս:

Վորքան կենդանի և անմահ են դեռ ազգային բարձր առաքինությունները վրացի կնոջ մեջ, այն կնոջ, վորը գեռ չի ապականվել Արևմուտքի սալոնների ախտով, — մտորում եր Սաքավելին:

Եեվ ահա այն միտքը, վոր ինքը կոչված ե նորից վոգերոչելու և իրականացնելու առդային այդ ավանդական սրբություն դարձած առաքինությունները, — նրան լցրին գործնեյության յեռանդով:

Պետք եր սկսել:

## ՆՐԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԵՆ?!

... Ամենի սովերը հետևում եր նրան, իսկ նա փախչում եր խելացնոր:

Ուսւթավելու պողոտայով իջնելիս, նրա աչքերը դեմ առ դեմ հանդիպեցին ինչ վոր փոքրիկ և սեսափայլ աչքերի: Նա արագ անցնելու պատճառով չկարողացավ չափել և իմանալ թե ինչ մարդու եյին պատկանում այդ աչքերը: Նա կարող եր յետ նայել, բայց զգուշացավ: Առաջ անցավ ծանր տաղնապը սրտում, շարունակ հարցնելով, — ով կարող եր լինել այդանու շեշտակի և վորոնող աչքերով անձնավորությունը: Գուցե վոչ մի անհանգստանալու պատճառ չկա, գուցե դա մի պատահական հայացք եր, վոր նա բարզոք համարեց ծովել դեպի եկեկարոքարշի զիծը և ցատկել առաջին իսկ սլացող գծակառքում: Նա սկսեց անհանգիստ զիտել դիմացի մայթը, — վոչ վոք չտեսածվ արդյոք իր այս հաջող տրյուկը: Վոչ վոք նրա աչքին ընկավ, վորի վրա կարողանար կասկած ունենալ: Բայց թափանցող և սուր աչքերով անծանօթ հայացքը նրա մտքից չեր դուրս գալիս:

Մուշտայիղի մոտ նա իջավ և սարսափով նկատեց, վոր մի ուրիշ զծակառք ընդհուպ գալիս եր իր նստած զծակառքի յետնից: Զլինի՞ թե անծանօթ ազենտը արդեն հետեւում ե իրեն: Բայց վհչ, շուրջ վոչ վոք չկար: Այդ նրա հիվանդում յերեակայությունն եր նուան խարում: Նստեց այդու սստարանին:

Նրա առջելից անցավ մեկը, կաշվե բաճկոնով և կեպիյով: Նա շատ կուզենար նայել նրա աչքերին, — ստուգել, արդյոք նա չեր իրեն սուր հայացքով զիտողը բայց անծանօթը գնում եր զլիսահակ և վոչինչ վորոշել չեր կարելի:

Վեր կացավ և քայլերը ուղղեց զեպի դուրս, փողոց: Պետքեր մինչև յերեկոն անցկացնել մի վորեն փոքրիկ տրախտիրում: Թերթափաճառի մոտով անցնելիս նրա մտքով անցավ թերթ գնել, բայց հետո մտածեց, վոր զա յել կարող և կասկած հրավիրել, Բայց հետո մի փայլուն միտք անցավ նրա մեջ:

— Հայերեն լրագիր տվեք ինդրեմ, — զիմեց նա վաճառրղին սուսերեն:

— Վարն եք ուզում...

— Ե՛, մեկ ե, բոլորը տվեք:

Ստանալով Յ անուն լրագիր, նա սկսեց գլուխը կախել նրանց վրա և առաջ անցնել Ապա մտավ ներքնատուն — ճաշարան:

Տրախտիրում իրեն խաշ պատվիրելով՝ նա սկսեց մտածել այն մասին, թե ինչպես անցկացնի որը: Ժամանակը անցնում եր սպանչ կերպով դանդաղ և սրտմաշուկ: Բոպեները սողում եյին և լինում նրա սիրտը պղտոր մի մաղձով: Նա մի սուր կակիծ զդաց իր կրծքի տակ անդրադառնալով այն դառն վիճակին, վորում գտնվում եր նաև նա, — իր յերկրի առաջավոր և ընտրյալ վորդին, նույն այդ յերկրում հալածական յեղերդի պես, փախչում ե իրեն հետապնդող հայացքից: Ի՞նչ կյանք ե, ինչպես հասավ նա այստեղ:

Վերջապես մթնեց, նա դեն շպրտեց այնքան անտեղի վորքան և անհասկանալի լրագրները և դուրս սողաց այնտեղից:

Տեր-աստված... Ով ե այդ կաշվե բաճկոնավոր մարդը, վորը գալիս ե իր յետեից: Մութն ե: Զոկել չի լինում թե ով ե, բայց նրան թվաց վոր նրա աչքերը այն սուր և ծառով աչքերն եյին, վորոնք հանկարծ փայլատակեցին իրեն տեսնելիս, մուստիվելու պողոսայում: Նրան թվաց, վոր նրանք անքթիթ իրեն են դիտում Պարզ ե նա ճանաչվել եւ Պետք ե փախչել, բայց ուր: Նա քայլերը արագացրեց և ապա նորից յետ դառավի: Չե. իրեն հետևող չկա: Խորկանք եր, հալուցինացիա: Չե. նա հիմա կփորձի և կստուգի: Նա շարունակեց առաջ անցնել նույն արագ քայլով և ապա իսկույն պահ մտավ միտան խորշում: Շուտով նրա մոտով անհանդիստ քայլերով և վորոնող հայացքով անցավ այդ զարհութիւն մարդու կերպարանքը:

Նա աննկատելի մնաց և ապա իսկույն դուրս գալով խորհից, յետ զարձավ ու մտավ ամառային ակումբը, խառնվելով ընդհանուր խաժամուժին: Դահլիճում գնում եր ինչ վոր ներկայացում հայերեւ, լեզվով: Այդ լավ ե: Այստեղ նրան վոչ-վոք չի վորոնի: Վերնահարկի տոմս գնելով, նա բարձրացավ վեր և կծկվեց իր տեղում:

Նա չկարողացավ սակայն յերկար նստել:

Նրան սաստիկ ջղայնացը ներկայացումը, վորը նորմի գործ եր: Դա վոչ պիես եր, վոչ ոպերետ, այլ ինչ-վորմի խառնուրդ: Այստեղ նա լսեց կովկասյան գանազան յերգեր, վորոնց խոսքերը սակայն պետք ե փոխված լինելին, վորովհետև բազմությունը վողջ թոքերով ծիծաղում եր: Բեմի վրա ծաղը վում եյին Վրաստանը, Հայաստանը և Ադրբեյջանը նրան թվաց վոր ամենից ավելի աշխատել են խայտառակել Վրաստանին: Վրաստանի դերը խաղացող դերասանը հանդես եր յեկել ժորդանիայի դիմաներկով: Նա չեր կարող, առանց գարշանքի նայել այդ բոլորին և զարմանում եր, վոր թույլ են տալիս Վրաստանի մայրաքաղաքում հայերին այդքան լրբանալ:

Նա չհամբերեց և ինչ վոր հայնոյանք մրթմբթաց: Կողքին նստած մազերը կտրած մի թուխ աղջիկ նայեց նրա վրա, և ապա քաշվեց մի կողմ, ինչպես փողոցային սրիկայից: Վարագույրը իջնելիս նա իր կոպիտ վարմունքը հարսթելու համար ասաց նրան ուռերին:

— Ինչպես կարելի յե ազգություններին այդպես վիրավորել:

— Վոչ թե ազգություններին են ծաղրում, քաղաքացի, այլ բուրժուազիային, — մենշերիկներին, դաշնակներին մուսավաթիստներին, — և հաղթականորեն գլուխ տալով հեռացավ, իրեն թողնելով մի ուշ մտաբերված պատասխանի հետ:

Ակումբից տուն դարձավ: Այնտեղ սպասում եր քույրը, Նինան: Համբույր, արցունք, կարոտ: Նինան արդեն 2 յերեխայի մայր ե: Ամուսինը, իր յերեխնի մոտիկ ընկեր Անդրյուշը, մենշերիկի հետ եր կապը խզելուց հետո վորոշ վստահություն ե վայելում և մեծ տեղ ունի համալսարանում: Նինան արցունքը աչքերում խնդրում եր նրան հեռու մնալ քաղաքականությունից, վորովհետև Զեկան վոր կա, յոթաչքանի դե ե, վորտեղից ասես գուրս կհանի ամեն մի գաղտնիք, — ապա ուշագիր զննելով իրեն, նա հանկարծ խոսքը կտրեց և հարցրեց: —

— Ո՞ւր եյիր այս յերկու որը...

Մինչև նա կուղենար մի միջանկյալ պատռախանով փակել հարցը, մայրը մեջ ընկապ:

— Պորդի, զավակս, կարելի՞ յե դալ հայրենի տունը և առանց վոչինչ առելու կորչել որերով, յես ու քույրդ հալվեցինք քեզ սպասելով:

— Ճիշտ ե, մամա, ներիր քո անառակ զավակին, — ել եռպես բանի չի լինի: Բայց հիմա յես սաստիկ քնել եմ ուզում: Թողեք ինձ հանգիստ:

Քունը խառն եր և անհանգիստ:

## ԿԱԴՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՐՅՈՒԿԱՅԻՆ ՄԻ ՖԻԼՄԻՑ

Մյուս որը նա շատ վաղ վեր կացավ վերզգեստավորինք վորպես ունեոր մի քաղաքացի կամ մասնագետ և մտածեց, վոր նա այսոր պիտի յերեկվա հանելուկը լուծի, — արդյոք առել են իրա հոտը թե վոչ:

Հանկարծ զանգը քաշեցին: Նա չհամարձակվեց մոտենալ դունքը: Արթնցած մայրը վեր կացավ և զգուշ մոտեցավ դուռը բանալու: Մի վայրկյանում նրա մտքով անցավ փոքրիկ պարտեղի պատով, մյուս զուգահեռ փողոցը դուրս գալու ծրագիրը:

— Հարցը ովքեր են, — շշնջաց նա մորը:

— Ով ա եսպես առավոտ կանուխ... փնթինթաց մայրը գժգոն:

— Շուտ արա դուռը բաց մերս, կառավարության մարդկանք:

— Ի՞նչ եք ուզում եսպես կանուխ, — նվազած հարցը մայրը:

Նա ավելի վոչինչ չլսեց: Պատերով թոչելով և ձեռներն արնոտելով նա դուրս յեկավ բանուկ փողոցը և մտածեց վոր պետք ե փախչել քաղաքից դուրս Գուցե կայարան գնալ և ծլկվել թագու կամ Յերևան: Վերջապես մի վարձու ավտո:

— Քիմր... Նավթլմաւդ.

Ավտոն սուրաց: Դեռ կայարանին չեր հասել. յերբ յեսեից փոշի հանելով յերեաց մի ուրիշ ավտո:

— Նըանք են:

— Շրջվեր առաջին փողոցով գեպի աջ, քաղաքամեջ, շուտ Շոփերը հասկանալով, վոր գործը բավական մութն ե, ըջեց գեկը առաջին իսկ փողոցով և գոռաց:

— Հարհեր մանեթ հենց այս ըոպեյիս վոր չտաս...

— Ահա — ահա: Միայն թե շուտ, — չհասնեն:

Մեքենան իր թափը արագացրեց և սաստիկ աղմուկ հանելով, անցորդներին նախազգուշացնելու համար, առաջ սուրաց կատաղի թափով: Յետեկից, ավտոյի անցած նախավերջին փողոցից լսվում եր հետամտող ավտոյի սուր ու ծակող սույլը:

Ավտոն կանգնեց և շրջերը դուռը բաց անելով գոռաց:

— Զեկայի մաշինն ե, վոչինչ անել չեմ կարող. փորձեցը գլուխներդ ազատել տներում թագնվելով, իսկ ավելի լավ են ե, վոր հանձննվեք...

Նա դուրս թռավ և ուզեց փախչել բայց արգեն ուշ եր:

## ՍԱՐՍԱՓԵԼԻՆ ՅԵՎ ԱՆՍՊԱՍԵԼԻՆ

Մահն ե ահա կանգնել բանտի կիսալույսում,

ու նա կարկամել ե ասես լուսնահար.

Նա աճից ճեկեկալ ու ճշալ ե ուզում,

բայց սոսկումը խորն ե և լեզուն իր համբ:

Վողջ որը վոչ վոք նրան չայցելեց և սուր անձկության զգացմունքով նա սպասեց, մտորեց և վարհիշեց բոլոր զեպքերը, վորոնք փոթորկի պես յեկան, անցան ու նետեցին նրան այս քարակուռ զնդանը:

Նորից իշավ զարհուրելի գիշերը և նորից բացվեց անուրախ առավոտը: Մտքերի և մթին կասկածների կասկարայի վրա նրա ուղեղը մարմանդ խորովկում ե ու մորմոքվում:

Ի՞նչ պիտի բերի նրան այսորը:

Իսկ բանտապետի առանձնասենյակամ զբնգացող հեռախոսի լսափողից լսվում եր այդ ըոպեյին անքուն մնացած և բազմաթիվ նիստերով ու քննություններով վողջ գիշեր անցկացրած մի բոյլշեկի վորոտալից կարգադրությունները:

— Հանձնեցք եղ իդիոտ Սարավելուն այսորվա լրագրները և նախապատրաստեցեք իմ հարցաքննությանը: Եղ-

պեսու Մի բան ուտում և եղ խողի ճուտը թե չեւ ԶԵ. Հըմ.  
սիրտը բիսկվիտ և ուզում յերեք... լավ...

Բանտապահը ներս մտավ զնդանը և հազարով ասաց,  
ինչպես սերտած մի դառ.

— Հիմի մեր բերդը ունի իր գրադարանը. թե կկամե-  
նաք ձեզ ենտեղից գիրք կարաք ստանա...

Գիրք. ինչ գիրք կարող են նաև կարդալ հիմա. են ել նրանց՝  
բոյլափիկների գրքերը. Բայց... Լրագիր: Ո՛, յեթե նա կարո-  
ղանար լրագիր ստանալ և իմանալ ինչ ե կատարվում դուրսը,  
և ինչ են գրում իր մասին... Կտան իրեն լրագիր: Պիտի  
հարցնել: ԶԵ. եստեղ խորամանկություն և պետք գործ դնել:  
հարցնել:

— Ինձ բերել տվեք... եսորվա լրագրները... Ասեք վոր  
շատ եմ խնդրում:

Նա սրտատրով սպասում եր գործի յելքին:

Քիչ հետո մի ամբողջ դաստա լրագիր նրա առաջ դրվեց:  
Քիչ հետո մի ամբողջ դաստա լրագիր նրա առաջ դրվեց:  
Նա բուռն հափշտակությամբ հարձակվեց լրագրների վրա և  
նա բուռն հափշտակությամբ հարձակվեց լրագրների վրա և  
կարդաց, — առջեկց, յետեկց... վերից... վարից... Մի վայր-  
կարդաց, — առջեկց, յետեկց... վերից... վարից... Մի վայր-

Վերջացավ... կորած ե, մահ...

Նրա աշքերում դեռ հատիտորեն պարում և տպագրական  
շրիփտը ընդունելով հսկայական չափեր:

«Հականեղափոխական լրտեսներ... Հականեղափոխական  
կազմակերպություն... Ուզեցել են ապստամբություն բար-  
կազմակերպություն... Սուզան բարձրացրա... Վկվեդացիայի յեւ յեն-  
ձրացնել... Սուզանի ավանտյուրա... Վկվեդացիայի յեւ յեն-  
ձրացնել... Կոմիտեյի անդամներին ձերբակալել են... Մահ  
թարկված... Կոմիտեյի անդամներին ձերբակալել են... Մահ  
իմպերիալիզմի վարձու լակեյներին... Հեղափոխության ստոր  
դահիճ Սաքավելին բռնված ե... բանվորները պահանջում են...  
Մահ... Մահ... գնդակահարություն:

## ԿԱԹ ՅԵՎ ԹՈՒՅՆ

Նրան տրված սաստիկ հարվածից նա բավական ուշ  
սթափեց: Գլուխը ծանրացել եր, գլուխը մաղում եր: Գի-

տակցության վոչ մի նշույլ չկար նրա ուղեղում: Ամեն ինչ  
ծածկված եր թանձր աղջամուղջով:

Նա անիմաստ կերպով հայացքը նետեց դեպի բացվող  
դուռը և տեսնելով քրոջը, մի թույլ շարժում կատարեց դեպի  
նա: Նինան ընկավ նրա կրծքին և հեկեկաց:

— Նու, Նինոչկա, հերիք, հերիք, — կրկնում եր նա և  
ինքն ել լուս հեկեկում եր:

— Դու քաղցած ես Պատոն, յես քեզ ուտելիքներ եմ բերել:  
Զեյին թողնում... Սանդրոյին խնդրեցի, կարգադրեց:

— Սանդրոն, — մրմնջաց նա անգիտակցարար:

Նինան նրան կաթ տվավ, հետո շոկոլադ ու կարագով  
բուտակերպուաներ: Նա աչքերը անքթիթ հառած պատուհանի  
վանդապատին, դանդաղորեն ծամում եր և կուլ տալիս պա-  
տառները, խոռված մանկան պես: Արցունքները, վորոնք  
փայլում եյին նրա այտերին և տալիս նրան մի խղճալի  
տեսք, նա չեր ել գլխի ընկնում սրբել:

Կամաց-կամաց նրա միտքը պարզվեց և ծանր հաշմու-  
թյունը, վորը նստել եր նրա վրա՝ անցավ: Նա նորից գրկեց  
քոյզը և այս անգամ սրտանց ու շնորհակալությամբ լի:

— Ի՞նչպես յեկար մոտս, հոգիս:

— Մաման յերկու որ եր ճաշ եր բերում, խնդրում, աղա-  
չում, վոչ իրեն եյին ներս թողնում, վոչ ել կերակուրը առ-  
նում: Վերջը յես գնացի Սանդրոյի մոտ... Մի, ինչ հոգի  
մարդ եւ Յերնեկ բոլոր բոյլափիկները նրա պես լինեյին: Յես  
ենքան սարսափելի բաներ եյի լոել նրա մասին, վոր զար-  
գանդս գալիս եր մոտը գնալ: Վերջը մատածեցի՝ ու ինչ, —  
Սանդրոն ե, ելի, են խեղճ տղեն, վոր որերով քաշ եր գա-  
լիս իմ յետեկց և սիրոց մեռնում եր ինձ համար: Միտ ե:

— Ի՞նչպես չե... Հիանալի տղա յեր... Քանի անդամ նա  
ինձ ոգնել ե իմ դպրոցական հակառակորդներին ծեծելու  
մեջ: Համ... ինչ եյի ասում, — Նինոչկա, բա մարդուդ ինչի՞  
չեյիր ասում... ԶԵ վոր նա կապեր ունի...

— Մատաղ, ել մի ասի: Ի՞նչքան խնդրեցի, լացի, — վոչինչ  
չոգնեց: — Վոչինչ չեմ կարող աներ, — վոչինչ չեմ խառն-  
վում, — ասում եւ ենալես ել, — առանց վրես խոսում

են, ծուռ աչքով են նայում վրես. — գիտես վոր նա զգուշ ե պահում իրեն։ Մեղադրել չե լինի։

— Да-ա... Ուրեմն նա վոչինչ չե կարող անել ինձ համար։

— Չե Պլատոն, — մրմիջաց քույրը և զսպելով արցունք ները ավելացրեց, — հույսներս Սանդրոն եւ Նա դեմու հրեշտակի պիս ուժեղ եւ Նրանց մեջ մեծ տեղ ունի. Վոնց վոր ուղենա՝ գործը շուռ կտա։

— Հա, իհարկե... Սանդրոն ինձ չե մոռանա... Եղանակ, — Անդրյուշը ձեռքերը լվանում ե... Մոռանում ե, թե յես ինչքան եմ ոգնել նրան։

— Ասացի, եղ ել ասացի, հոգիս. վոչինչ չոգնեց, Յերեւում ե վոր վոչինչ չե կարա անի։

— Իսկ... ինչ են իսկի դուրսը խոսում... Ինչ են անելու ինձ հետ, — հարց տվեց նա շատ նվազ և խեղճ ձայնով, բայց աչքերը շեշտակի հառեց քրոջ հայացքին, կարծես, այնտեղ նա կկարդա իր դատավճիռը։

— Ամեն ինչ ել ասում են, ջան, — պատասխանեց քույրը խորին զսպվածությամբ։ Ասում են, վոր ամեն ինչ քեղանից ե կախված։ Վոր զղաս ու խոստավանվես... կարող են... ներել։

Նա ազատ շունչ քաշեց, նկատելով վոր յեղբոր հայացքը հեռացավ իրենից, և նա իրեն չմատնեց։

— Հա, ի հարկե, բանն ել հենց դրանումն ե, Պիտի մտածել։

— Մտածիր հոգիս, հետո խորհուրդ հարցրու Սանդրոյից, խնդրիր... Յես ել կխնդրեմ... Անդրյուշին ել կասեմ։

Փղձուկը խեղեց նրան, և նա հուզմունքը թագցնելու համար նորից փաթաթվեց նրա վզին։

Յեղբայրը մեղմությամբ ազատվեց քրոջ գրկից և նրանք մի ըոսկ լուռ նայեցին իրար, կարծես պատրաստվելով հրաժեղափակ ձեռք տալ։

— Աա... միտս յեկավ, — տեղից վեր ցատկելով և բարկացայտ աչքերով գոռաց նինան, — գիտեմ, վոր այն լիրը, այն անառակը, քեզ նամակ եր գրել, վոր քեզ տամ, — ճեղքեցի, դեն նետեցի։

— Ի՞նչ անառակ, լիրը, — և նրա ահաբեկված մտքով արագ կերպով անցավ Բաթումի պարկը, գիրուկ այն պոռակին ու այն վորը. — Նա գունաթափ նայեց նրա վրա։

— Զգիտեմ։ Աբաշիձեյի դուրս յեկած կինը՝ Մարիան...

— Նինա, — կատաղած, թե զայրարած գոռաց յեղբայրը։

— Հա, հա, — յեթե չգիտես — լսիր և ճանաչիր մարդկանց։ Ճիշտն ասա, նրա մնան եցիր դու այն գիշերը։

— Հետո, — մոնչաց նա։

— Հետո այն, անխելք տղա, վոր մարդուն թաղելուց մի քանի ամիս հետո նա սկսեց արդեն մեկի հետ ապրել վորպես սիրուհի, վերջը դրան թողեց և մի ուրիշ յերկսի վղովն ընկալվ իսկ ես մի տարի յե, ինչ նա իր ապրուատը ձեռք ե բերում ամեն մի փողոցից անցնողից։ Գիշերը տաս ուուրիլ, — ես ե նրա բարոյականության հավատամքը։ Մինչև անգամ յերգ ե գուրս յեկել վրեն։

— Նինա, նինա... գունք բամբասանք ե, գուցի...։

— Հա-հա-հա-հա... բամբասանք։ Չե Պլատոն։ Հենց են ե, ինչ վոր կա։ Այ առաջ ել գիտեյի, — բան ասում եյի։ — Չե։ Քույրդ հո քեզ չի խարի, հոգի ջան, լավ մտածի կհամոզվես։ Դու նրան զրամ տվիր։

— Հա... Դե եղ վոչինչ չի նշանակում։

— Գիտեմ, գիտեմ. թողնենք եղ։ Նամակը վոր գրել եր մի զզկելի կեղծավորության նմուշ եր, վերջանում եր մի թափանցիկ ակնարկով դրամի մասին։ Բնկած, փողոցային կին, հրեշտակի թքած։ Այդ թողնենք։ Յես դեռ ելի կգամ մոտղ, Պլատոն, շատ կգամ... ինչքան վոր թողնեն։ Մամային ել կասեմ, վոր քեզ միշտ ճաշ բերի։ Լավ կեր, խմիր։ Յեթե... վորնե կարիք կինի, ինձ ասա, մի բան կանեմ... ինձնից մի քաշվի, յես քո քույրն եմ։

Յեվ առանց թույլ տալու, վոր յեղբայրը մոտենա և գրկի իրեն, նա դուրս փախավ զնդանից։ Իսկ քարակուռ միջանցքում ամբողջ կրծքի ուժով զնդում եր դժբախտ քրոջ լացը։

## ՄԱՅՎԱՆ ԱՌԱՋԻՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Նրան նորից պաշարեց ինչ վոր ծանր, ալկոհոլիկ անուժություն, նա նորից ընկավ ծղնոտե անկողնուն և սկսեց



Դառն հեկեկանքը խզեց նրա ձայնը: Նա գլուխը դրեց թէին և գալարվելով ցավից ու ցասումից, — աշխատեց զլապել իր թռւլամորթ ջղերը: Իսկ մյուս կողմից հոգեկան ավայտանքների և մահվան սարսափի տարերային ուժը նրան ներշնչում ելին ծնկի գալ խոնարհվել այդ չուգունի պես իր կաշվե բաճկոնում փայլով, մետաղաձույլ մարդու առաջ, վորը կարող եր իրեն կյանք տալ: Խլելով նրա հսկայական ծանր ձեռները, նա մորմոքվելով շնչաց: —

— Սանդրն, — միթե դու թույլ կտաս, վոր ինձ... այս հասակում... իմ հայրենիքում, իմ հայրենակիցների ձեռքով... Մանդրուսում թել մտածիր, — ինչու համար: — Քաղաքական պայքարի... Դասակարգային կովի... Զե վոր բոլորս ել միասին կովում ենք գասակարգերի վերացման համար, այդ չարիքի վերացնելու համար... ել ինչու հանուն այդ չարիքի — իրար վոչնչացնել: Յես գիտեմ շատ հանցանքներ եմ գործել — դահիճ եմ յեղել շատ-շատերին, բայց հիմա տեսնում եմ... վոր կույր և անմիտ եմ յեղել յես: Պետք և վեր կանգնել դասակարգերից, Մանդրու, և հասնել մարդուն, վորը մեր բոլորի իդեալն ե... Ասա, ինչ դասակարգային պայքար կարող ե քեզ ստորագրել տալ մահվան դատավճիռը այն մարդու, վորը քո մանկության մոտ ընկերն ե յեղել վորին դու սիրել ես և պաշտպանել... հիշում ես... վորի հետ ապրել ես քո լյանքի այն յերջանիկ տարիները, յերբ դեռ քեզ համար չկար տառելի դասակարգն ու քաղաքականությունը, յերբ դու զեռ մարդ եյիր, Մանդրն...:

— Տէ-էք! Վերջացրիր: Դու խելացի բաներ ես ասում, բարեկամ: բայց հավատա, — վոչ ավելի խելացի, քան այն բոլորը, վորոնց մահ ե սպասում: Մահ ասածդ մահկանացույին հնարագետ և իմաստուն ե դարձնում, ու մեկ ել տեսար ենպես գեղեցիկ խոսքեր, ենպես սրամիտ պատկերացումներ... Շատ եմ լսել և շատերին: Ինքո ել 20 թվին մահվան դեմ կանգնած ժամանակ մի գիշեր լցվեցի այնպիսի ժագեռով ու քաղաքարներով՝ վոր չծիծաղես վրես՝ բանաստեղծի և փելիսոփայի պատիվ կը բերեր: Բայց նրանք ուրիշ տեսակ եյին: Բոլորովին հակուակը: Պատճառը դժվարանում եմ պատկերացնել: Այս որինակ խոսում եյի իմ մեջ են

մասին, Ու ինչպես մանուկ հասակից յես զզացել եմ ինձ դասակարգի վորդին, ինչպես եմ կը բել ամեն տեսակի զրկանք ու դառնություն, ինչպես եմ անարգվել և մերժվել... մարդկանցից կամ կնոջից, և ինչպես մտնելով դասակարգային պայքարում յես ինձ հպարտ ու յերջանիկ եմ զզացել — ու հիմա յել ինձ սարսափելի չի վոչ մի մահ կամ կախաղան... Տեսնում ես, — հակառակը, բոլորովին հակառակը: Հետո արդեն շաբաթ առաջ կուսակցության պատմությունը կարգալիս, աչքովս ընկալ մի ճառ: Կարգում եմ, կարգում դալիս, աչքովս ընկալ մի ճառ: Վարդիս ու զարմանքից գժվեմ: Վոնց ու քիչ և մուռ հիացմունքից ու զարմանքից գժվեմ: Վոնց վոր մի գրող բանաստեղծ են գիշերը մտել եր սրտիս մեջ, վոր մի գրող բանաստեղծ են գիշերը մտել եր սրտիս մեջ, լսել եր սրտիս ձենը ու բոլորը գրի առել ենքան սիրուն, ենքան հրաշալի յեր եղ բոլորը: Հետո տեսա վոր չե բանքան հրաշալի յեր եղ բոլորը: Վարդիս վոր դա ջուլհակ բանվոր քիցը, ինչ վոր կա: Դուրս յեկավ վոր դա ջուլհակ բանվոր Պյոտր Ալեկսեևի ճառն ե, վոր նա արտասանել ե ցարական նման շատերն են բռնվել ու մեղայի գալով կյանք են նման շատերն են բռնվել ու մեղայի գալով կյանք են նման շատերն են բռնվել ու մեղայի գալով կյանք են նման շարիքի մասին, մի կերպ միայն կարող եք այդ չարիքի մեղմանալուն նպաստել — գրել քո զզումն՝ մեղայարի ի լուր բոլորի, Խոստովանիր բոլոր արածներդ, սկսած կանը ի լուր բոլորի, Խոստովանիր բոլոր արածներդ, սկսած կապիտալիստներից վարձվելուց, վերջացրած Վրաստանը նրանց մի գաղութ դարձնելու ծրագիրներով: Խոստովանիր սրտաբաց և անսուս ու իմացիր, վոր յեթե փրկության հույս կա, այդ հույսը կարող ե արդարանալ քո շիտակուն դույս կա, իմանում: Նա տալիս ե քեզ իր զուր խոստումներ տալ չի իմանում: Նա տալիս ե քեզ իր զուր խոստումներ տալ չի իմանում: Պանդրոն մարդկանց թյան և անկեղծության զնով միայն. Սանդրոն մարդկանց թյան և անկեղծության զնով միայն. Վարդիս մարդկանց պայդ իմորհուրդը, ինչպես դասակարգի մարդ: կամ վերացայդ իմորհուրդը, ինչպես դասակարգի մարդ: կամ մարդ, վորի մասին դու խոսում եյիր, ինչպես ուզում կան մարդ, վորի մասին դու խոսում եյիր, և վարվիր...

— Սանդրն, յես կզբեմ, յես ամեն ինչ կզբեմ... կզբեմ այնպիսի բաների մասին, վորոնց մասին վոչ-վոք դեռ չի դրել... միայն թե ներվի ինձ իմ անցյալը...

## ՄԱՀՎԱՆ ՅԵՐԿՐՈՐԴԻ ԽՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Նա մահ եր աղերսում, վոր իրեն կյանք շնորհվեր:

Յեկ նա գրեց...

Գրեց յերկար և հոգեկան սուր տանջանքներով, լցրեց վիթխարի թերթեր իր խոստվանություններով ու զղջման դեղումներով: Մաքերը, հիշողությունները և փաստերը զարմանալի կերպով նրա գրչի տակից դուրս եյին գալիս, վորպես անխուսափելի և այդ պատճառով ներելի մոլորություններ և մոլորթյուններ: Նա սիրել եր իր յերկիրը. յերազել եր նրա մասին յերկար, մտածել եր, վոր այսաեղ ժողովուրդը հեծում և խորթ լծի տակ... Յեկ նա յեկավ այստեղ ապստամբության կրակը հրահրելու: Բայց... Այստեղ համոզվեց, վոր յերկրի ապագան խորհրդայնացման մեջ եւ նա դարձի յե յեկել և այժմ գարշանքով ե հիշում այն եմիգրանտական ճահիճը, վորի մեջ նա յերկար թափալվել եր հակախորհրդային յերազներով, գարշանքով ե հիշում նրանց, ովքեր հիմի յել շարունակում են այդ կյանքը, ովքեր ծախոված են մարզաների և զնդապետների նվաճողական և ստրկացուցիչ նպատակներին:

Նա տեսնդային ջղաձգության մեջ հարմար բառեր եր վորոնում հանգույցային հարցերը ձևակերպելիս, այնպիս վոր նրա զղջումը լինի ել ավելի սրտառուչ, անկեղծ և տողորիչ: Միտքը այդպիսի բռակեներին թակարդն ընկած հովագի պես խփում եր կատաղի մի հուսահատությամբ այս ու այն կողմը, յելք եր փնտրում, յելք, վորն աներկրայռեն ապահովեր նրա փրկությունը և նրան կյանք պարզեց: Այսպիսի հուժկու ճիգեր առանձնապես նա գործ գրեց վերջին յեղափակիչ պարերությունները գրի առնելիս:

Յեկ հանկարծ... նա զգաց վոր ամեն, ամեն հոյս այդ թղթի կտորների վրա յե... Յեկ մահվան ամենի սարսափը

և դեպի կյանքը ունեցած նրա խելահեղ ձգտումը նրան հանկարծ ներշնչեց մի պայծառ և ազատարար յելք, մի իմաստուն հղացում: Նա խորին մի տափնապով ջղաձգուրեն կառչեց այդ ներշնչման խմաստին և յերկար, յերկար սկսեց դիտել և զննել այն, վախենալով, վոր նա կարող է հանկարծ անեանալ, այնպիս ինչպես վոր մինչև այդ անե յեր: Նա զգաց, վոր դա այն հղացումն եր, վորին նա աշխատում եր ու սահում նրա բռնել բայց վորը շարունակ ոլքտում եր ու սահում մտքի ճանկերից:

Վերջապես նա ճանաչեց և հասկացավ այդ ներշնչումը:

Նա արագ աչքի անցկացրեց գրածները և ապա պատառ պատառ անելով ըոլոր վերջին սրտահույզ զեղութներն ու պաղատանքները, — ինչ վոր չարախինդ և դժնի ժպիտով պաղատանքները, — ինչ վոր չարախինդ և կենդանացնել կյանքի և սկսեց թղթի վրա մարմնավորել և կենդանացնել կյանքի և մահի պայքարում ծնած այդ հղացումը:

Միթե պաղատանքը կարող է շարժել այն մարդկանց սիրտը, վորոնք այն հեռավոր բանվորական արվարձանում «սամասուռդ» եյին գոռում, կամ այն մարդկանց, վորոնք հարցաքննում եյին նլան այնպիս վոխակալ և դժնդակ հացըներով:

Միամտություն ե այդպիս կարծել: Փոքրոգություն ե: Բայց նա այժմ վոչ փոքրոգի յեր, վոչ ել միամիտ:

Մահվան դեմ ունեցած նրա անսանկան, խելահեղ սարսափը նրան հանկարծ ինչ-վոր քաջություն և իմաստություն տվեց:

Յեկ այժմ նա նկարագրում եր այն հոգեկան ամայությունը, վորը ապրում ե նա այժմ, այն ավերակները, վորոնցով շրջապատված ե նա: Կործանվեց նրանում ամեն ինչ, — գաղափար, հոյս, պաշտամունք, — ըոլոր նրանք խաբեյական գաղափար, հոյս, պաշտամունք, — ըոլոր նրանք խաբեյական մոլորություններ եյին: Միայն իրական և ճշմարիտ գուրս յեկավ այն, ինչի դեմ նա կուրորեն կովել եր ու ընդվզել: Ել ինչ և մում այդ ըոլոր ավերակներից և համատարած կործանումից հետո...

— Մեռնել միայն մեռնել:

Յեկ նա դիմում ե հեղափոխության կարմիր խղճին, — Յեկ նա դիմում ե հեղափոխության կարմիր խղճին, — գնդակել, մահ շնորհել իրեն, անողոք լինել գնդակել իրել, — գնդակել, մահ շնորհել իրեն,

վըրպեսզի նա աղաւիլի այն խղճի խայթերից և դժնի տառապանքներից, վորոնք պատառում են նրա կուրծքը:

Մահ ե աղերսում նա, մահ, մահ...

Նա չի կարող այլևս ապրել և զգալ, վոր նա իր հայրեանիքի դեմ վոճիրներ ե գործել, նա անկարող և այդ անել: Փրկեցեք նրան իր հոգու մթին զնդանից, աղատեցեք նրան այս սրտակեր մողմոքութիւններից ու ցավերից և մահ տվեք նրան:

Իհարկե. Նրան ժպտում ե մի ուրիշ լուսավոր ճանապահն. —

Դուրս գալ նորից լույս աշխարհ, մտնել աշխատավոր և  
շինարար մարտիկների շաբքերը. աշխատել քրտինքը ճակա-  
տին աշխատավորության բարորության համար և այդպիսով  
մեղմել ու քավել իր հանցանքները: Նա այդ դեպքում չեր  
խնայի վերջին կաթիլ արյունը, կտար ամեն, ամեն ինչ նոր  
կյանքի ստեղծմանը, նա կատաղորեն կկովեր հակահեղափո-  
խական իժի դեմ, վորոնց հետն եր նա յերեկ. նրանց դեմ,  
վորոնք յերկրից հեռու արյուն և ստրկության շղթաներ են  
կռում սոցիալիստական մեծ միության դեմ:

Այս այդ բոլորը նա կաներ և յերկիրը կներեր նրա ու անցյալը, կընդուներ իր զիրկը նրան, վորպես մոլորված, անառակ վորդու...:

Բայց... անողոք և դասակարգային պայքարի տրամաբանությունը, նա զիտե, վոր այդ ճանապարհը փակ և նրա համար։ Փակ և այդ դուռը նրա համար։ Հեղափոխության անողոք և արդար խիղճը յերբեք պարտավոր չի ներող լինել ավերակների վերածված իր գոյության հանդեպ։

Յեկ այդ պատճառով Պլատոն Սաքավելին դուրս և գալիս Ժպտերես և անսարսափ կերպով դիմավորելու իր փրկության այն ճանապարհը, վորը տանում և նրան գեղի վոշինչը...

Դրա համար ել... նա մահ ե... խնդրում...

... Իսկ յեթե հանկարծ նըա «աղերսը» կատարվի:

Ո՞ւստանի...

ԺԱՄԵ ՏԱՅՅԵՐԿՈՒՄԻՆ

Հետևայլուն եր...

Նրան այդ որը վոչ վոք չեր այցելում, բայց սա զիա  
անհրաժեշտությունը խսկի չեր ել զգում: Վողջ որն առանց  
ձանձրանալու նա զբուցեց եր հետ և ցնորեց իր մոտիկ ապա-  
գայի մասին:

Պարզ ե, վոր դուրս պըճնելով այս զորչց տարգագուր  
կազմակերպել եր փախուսատը մյուս ահոելի և անսահման  
այն բանտից, զորին խորհըդային յերկիր են անվանում:  
Այդ դժվար գործ ե, բայց նա գլուխ կբերի... Պարսկաս-  
տանի գծով... Այն, այս, Այն տեղից ել Հնդկաստանի վրայով  
Անգլիա և Պարիք:

Յեկ այս խոհերի մեջ նա մերթ-ըսդ-սորթ ուրբա շշը  
յեր անցկացնում որվա լրագրները, ուր բազմաթիվ կոմեն-  
տարիաներով տպված եր իր զզջման խոստովանությունը:

Պետք եւ վոր մն տպագոլուույ  
Ախներ իր այդ «ի խոչ սրտիցը»:  
Իհարկե, այնտեղ, Պարիզի շանտաններում քաշ յեկող ըն-  
կերները պիտի ամեն կերպ աշխատեն նրան վարկաբեկել և  
վախկոտ դուրս բերել: Բայց նա վերադառնալով՝ նրանց  
հախիցը լավ կա և կապացուցի, վոր նրանցից յուրաքան-  
չական մի մորթապաշտության նմուշ եւ ինչն հապա-  
ցուրը մի մորթապաշտության նմուշ եւ ինչն հապա-  
ցուրը մի մորթապաշտության նմուշ եւ ինչն հապա-  
ցուրը մի մորթապաշտության նմուշ եւ ինչն հապա-

Նա իր ուժեղի չափ աշխատեց և տքնեց... Հերիք և  
Հիմի յել թող նրանք փորձեն, յեթե արհիություն ունեն:

Դուցե մի որ նա ծովային և ողային տորմիղներով ծեծի իր հայրենիքի փակ դռները և կըակի ու գաղերի ուժով ներս խուժելով ավերի ու մահվան մատնի այս վայրենի ամբոխ-ներին:

Այս բորբոք խոհերի մեջ նա չնկատեց, ինչպես ներս մտավ մի զինվորական:

— ... Գիշերվա ժամը տասյերկուսին, — լսեց նա և դարձավ գեղի նա, սթափված իր խոհերից:

— Ի՞նչ...

— Այսոր գիշերվա ժամը 12-ին ի կատար և ածվելու արտակարգ հանձնաժողովի վճիռը, ձեզ գնդակահարելու մասին, Վաղորոք հայտնվում և այդ մասին ձեզ...

## ՎԵՐՁԻՆ ՄՈՀԵԿԱՆԸ

Անդրեյ Կալաձեն մոռացել եր թեյն ու նախաճաշը: Մոռացել եր նաև կնոջը՝ Նինային, վորն ընկած գահավորակին լալիս եր ու տրորվում:

Նա արագ ու հետաքրքրության բուռն զգացմամբ ընթերցում եր որվա լրագիրը:

Միթե այդ մարդը, — իր մոտիկ ազգական Սաքավելին, վրացի ազգային ավանդական հերոսության պայծառ մարմնավորում և յեղել:

Ակնոցները դողում եյին նրա քթին, — այնքան հուղված եր և զգացված նա:

Վերջապես նա գեն նետեց լրագիրը և վեր կենալով սկսեց շրջել սենյակում և մտորել:

Անդրեյ Կալաձեն չեր կարող առանց ակնածանքի կարդալ Սաքավելու զղումները: Պետք եր մեծ արիություն, հոգեկան ուժ ունենալ այդպես անհողդողդ և հաստատ վորով մահ պահանջելու համար: Ի՞նչն եր նրա համար թանկագին և բարձր այդ նամակում: Նա այդ պարզ կերպով չեր կարողանում պատկերացնել: Բայց Սաքավելու կերպարանը անում, բարձրանում եր նրա աչքում:

— Կասկած չկա, վոր նրա գրությունը դա ամենից պառաջ պատմական և վոյ անձնական փաստաթուղթ եր վոր-

պեւ այդպիսին ել պետք և դիտվի նա: Սաքավելին զղջում և և հաշտվում Խորհրդային իշխանության փաստի հետ, — այդ այդպիս ե, — և միաժամանակ զգացվում և վոր նա հաշտվում և այն խորհրդային իշխանության հետ, վորը հաշտվում և պետք ե Վրաստանին, նրա առանձնահատկություններին և պատմական զարգացմանը:

— Պատմական զարգացման, — ահա այն, ինչ չեն կարողանում ըմբռնել այս բայլշեկիները, հիշելով այն հարձակումները, վորին նա յենթարկվում եր ամեն անդամ համակարանում կամ մամուլում, յերբ Սաքավի և Լենինի լսարանում կամ մամուլում ազգային գրահավորված յելույթներ եր ունենում ազգանուններով մասին:

— Բավական և գիտական անալիզի մի փորձ, աղդային կուլտուրայի հատկանիշների մասին ակնարկ, կամ... թեկուզ կուլտուրայի հատկանիշների մասին ակնարկ, կարևորության խնդիրը և ահա ազգային ապահովեցնելու հականեղափոխության մեջ և քեզ դնում քեզ մեղաղը են հականեղափոխության մեջ և քեզ դնում քեզ մտտութայի առանձնահատկությունների մասին:

Զափաղանց գառն եյին այդ խոհերը նրա համար: Շատ հնարավոր ե, վոր իրեն չեղոքացնեն, մեկուսացնեն համարական ամսունուկան ամսունուկ, վարտեղից նա գեռ մինչև այժմ մալարանական ամսունուկ բակական մեծ հաջողությամբ առաջ տանել կարողանում եր բակական մեծ հաջողությամբ առաջ տանել կարողանում եր բակական վրաց գրականության պատմության սահիբ անհներում:

Ապստամբության բռնկումը ձ. գավառում իրեն վորով հույսեր եր ներշնչում: Մյու նա չի կարող ծածկել: Քաղաքանություն ե: Ամեն բան պիտի ոգտագործիֆ: Բայց քականություն ե: Ամեն բան պիտի ոգտագործիֆ: Բայց զործի արագ լիկվիդացիան և բանվածների խայտառակ (այն, զործի արագ լիկվիդացիան և փոքրողի) զղջման թոթովանքները... Մի խայտառակ և փոքրողի) զղջման թոթովանքները... Մի խոսքով նա և իր համախօհները նույնիսկ հնարավորություն ել չունեցան բերան բայց անել «Վրաստանի պայմանները» հաշվի չառնելու և Վրաստանը Տամբովի մի գուբերնիայի հետ նույնացնելու մասին:

Շատ սնանկ դուրս յեկան այդ վողարմելի կնյազներն ու սոցիալիստ կոմիտեյականները ել ինչ ազգային տրադիցիա- սոցիալիստ կոմիտեյականները... Բայց ահա նա, — Սաքավելին, ան- հերի ապահովեցնելոցիմ... Բայց ահա նա, — Սաքավելին, կանգնել և հպարտ և անընկճելի և մահ վեհեր, արիական, կանգնել և հպարտ և անընկճելի և մահ

եռում: Նա անկարող ե այլևս ապրել ամեն ինչի կործանումից հետո իհարկե, նման խոստովանությունից և դիմումից հետո, նրան չներելը քաղաքական փոքրոգություն կլինի: Բայց ումն ասես:

Վհչ. Նա այսոր և յեթե պիսի գնա Սաքավելուն այցելի, — և այն ել վոչ թե վորպես իր վաղեմի ընկերոջ ու ազգականի, — այլ վրաց ազգային ավանդությունների վերջին շառավիղի, վորպես ազգային իդեաների համար պայքարող վերջին մոհեկանի:

Նրան հաջողվեց թույլտվություն ստանալ և ահա յերեկոյան դեմ նա մտավ քարակուռ զնդանը, ուր ելեկտրալուսի դալուկ մշուշի մեջ, ծղնոտի վրա նա տեսավ նրան: — Պլատոն...

Մարդը վեր թռավ տեղից և վայրենի հայացքով նայեց իրեն:

— Յես եմ, — Անդրեյը. չճանաչեցիր,

— Անդրեյ, — աղաղակեց նա խելացնոր խնդությամբ, վերջապես... յեկար... լսի՛, Անդրեյ: Հենց քիչ առաջ ինձ ասին այդ մասին: Ասա ձի՞շտ ե... ձի՞շտ ե, վոր ինձ այսոր, ժամը տասյերկսին... Դիշերը նրանք գնդակահարելու յեն ինձ... Ասա Անդրեյ, հնարավոր ե միթե, այդ բոլորից հետո... յերբ յես ամեն ինչ խոստովանվեցի... Ասա, խոսիր.

— Պլատոն. դու յերեխս յես: Ի՞նչ ե պատահել քեզ, Սկսում եմ կառածել վոր այդ գեղեցիկ առողերի հեղինակը դու յես: Գուցե և ձիշտ ե: Այդպիսի մի վորոշում յեղել ե...

— Բայց դու կազմատե՞ս ինձ, Անդրեյ, այդ դու կարող ես անել... միջամտել, կամ փախուստու կազմակերպել: Ո՞հ, յես այնպես ապրել եմ ուզում, այնպես: Այնքան անհրաժեշտ ե ինձ, Անդրեյ, ապրել... Հեկեկանքը խեղդեց նրա ձայնը:

Կալաձեն շշմել եր գործի նման յելքից: Վերջին մոհեկանը... Հըմ. բավական անեկդոտիկ ե: Պետք եր ճողովրել այս ահարեկված վողորմելու մոտից: Ինչպիսի անկում, ինչպիսի սնանկություն,

— Յես քեզ կարող եմ միայն խորհուրդ տալ հավաքել ուժերդ և վրացի հերոսին վայել մահով մեռնել: Իսկ փրկել քեզ անկարող եմ:

— Անկարող ես... Վրացի հերոսին վայել... Սնուտ ե: Նման հերոսներ չկան: Բոլորին, բոլորին զիտեմ: Ապրելու ցանկություն, — ահա հերոսությունը. սեր դեպի կյանք, — ահա մարդու մեծությունը: Դու ինձ պետք ե ազատես, Անդրեյ, դու պարտավոր ես այդ անել Անդրեյ:

Կալաձեն դեն հրեց իրեն փաթաթվող ձեռները և շտապով և շնչահեղ դուրս յեկավ զնդանից: Միջանցքում նա պով և շնչահեղ մեծությունը: Եր ճակատի քրտինքը և հաղիվ իրեն մեքենաբար սրբեց իր ճակատի քրտինքը և հաղիվ իրեն նետեց ավտո...

Նա հոգեպես ջարդված եր և տրորված: Նա պարտված եր գգում իրեն վոչ միայն հակառակորդներից, այլև հենց իրենից: Նո մտածեց, վոր այս յերկրի տերը, այս եպոխայի հերոսը վոչ թե իրենք են, այլ նրանք... Սանդրոները:

Ինչ լավ կլիներ, յեթե նա այս այցելությունը կատարած չլիներ...

Հ'ըմ... Մեծագոյն հերոսությունը ապրելու տենչանքն ու... զեպի կյանքն ունեցած սերն ե! — Այդպէս եր ասում կարծեմ այդ լոգիուրո... Յեվ գա գուցե ձի՞շտ ե:

## ՍԱՆԴՐՈՆ

Հարավային ամառվա շոգը սկսեց քրտնքով վողողել քնածի առողջ ասես փորագրված դիմագծերով գեմքը: Նա անհանգիստ մոլտաց և աչքերը բաց արավ:

Քնով եր մնացել Հմ, ախը այսոր նա հանգստանում ե և կարող ե գեռ քնել: Չե վոր նա լուսաղեմին վերադարձավ տուն:

Բայց տոթը անհնարին եր դարձնում նրան քնել և նա սկսեց հագնվել: Նրա շարժումները չափազանց դանդաղ ելին և կրածե: Նա կարծես ամբողջ եյությամբ շնչում եր հանել կրածե: Նա կարծես անդորր խաղաղությունը, վորին այնքան ծագութի որվա անդորր խաղաղությունը, վորին այնքան ծագութի որվա վերջին յերկու շարաթվա անհանդիստ տենդուտ և ըավել եր վերջին յերկու շարաթվա անհանդիստ տենդուտ և լարված աշխատանքների գեղում: Յերեկ գիշեր ամբողջ ությարված աշխատանքների գեղում:

ուժասպառ ու հոգնատանջ՝ հայտնեց, վոր վաղը նա հանգստանալու յեւ

Նա մտերիմ և դեռ մշուշոտ հայացքով դիտեց սենյակը, իրերը, վորոնցից նա վերջերս միանգամայն կտրվել եր, նայեց պատերին կախված կենինի և Զերժինսկու նկարներին, վորոնք կարծես ուրախ աչքով եյին անում, ակնարկելով նրանց մասին, վորոնց հետ յերեկ նրանք յերկրի հաշիվները մաքրեցին, և վորոշեց վոր այսոր նա դուրս չի դնա, այլ կկարդա, ընկղմելով բազմոցում, կփորձի նորից քնել, նրա մեջ կնոջ կարոտ ել կար... Բայց նինայի այսոր գալը անհաճելի կլիներ յերկսի համար ել...

Ինչքան վոր նրա մտքերը սկսում եյին հաղթել ծանր քնի հոգնությունը և կամաց-կամաց արթնանալ, այնքան ավելի յեր նա համոզվում, վոր նրան այսոր ել չի հաջողվի, վոչ կարդալ, վոչ հորանջեր, նախ պետք եր զանգահարել կոմիտեն, հետո խմբագրությունը, հետո...

Ահա և լրագրները:

Նա արագ աչքի անցկացրեց «թշնամու խոստովանություններն ու զզման զղաճգությունները» վերնադիր կրող Սաքվելու բացականչություններով ու բազմակետերով լեցուն տողերը, նորից մեղմ ու հեգնորեն ժամանակաց և ինչպես յերեկ հանձնաժողովի նիստում նա մրմնջաց, —կեղտնու, փալաս, կարծում ե բնմի վրա յե... և խաղում և ֆրանսիական մելոդրամայում... վրաց քնքշասիրտ իշխանուհիների առաջ...

Քնքշասիրա իշխանուհիներ:

Նրա առաջ կանգնեց նինան, — նինա Սաքվելին, վորի հետ վերջին տարին նա սկսեց մի քաղցր և ասես հանցավոր կապ:

Այս: Սանդրոյի կյանքի գիրքն ունի այդ սև ու գաղտնի եջը: Ինչքան ուզում են, թող գովեն նրա բոյլշեկյան հատկությունները: Այդ եջը, միւնույն ե, չի չնշվի: Յերբեմն նա կարծում եր վոր, ինքը կարողանա վերջ տալ այդ կապին, բայց հետո տեսավ վոր այդ անհնարին ե.

Նա ամուսնացած չեր և չեր ել կարող ամուսնանալ: Նա սիրել եր այդ աղջկան վաղ պատասնելության և իր առաջին յերիտասարդության հասակում... Ճիշտ ե, հետո նա բոլո-

րովին մոռացավ այդ և նրան ժպտում եր կենակցություն մի աննման ընկերոջ-բոյլշեկյայի հետ... Բայց նինային նորից հանդիպելը իրար խառնեց ամեն ինչ:

Հանդիպեց նրան նոր պայմաններում: Նա արդեւ մի քանի տարի յեր ինչ ամուսնացել եր պրոֆեսոր Կալաձեյի հետ: Նրան թվում եր, վոր նրանք աշխարհիս ամենից անհամապատասխան զոյգն են և ապա ծիծաղում իր վրա, գիտակցելով, վոր դա իր հուսահատ և մերժված սիրուց հարուցված խանդի զառանցանքներն են միայն:

Նա բուռն ատելության զգացմունքով եր հանդիպում այդ շքեղ, հրաշալիորեն գեղեցիկ կնոջը և խոռվ կերպով աշխատում եր հեռանալ այն շըշանից, ուր նրանք եյին:

Ցեվ... Զարմանալի հանելուկ... Անհասկանալի առեղծում... Այդ կինը սկսեց փնտրել նրան, նայել նրան յերգած... Այդ կինը սկսեց փնտրել նրան, նայել նրան յերգած կար և ինչ-վոր աղերսող հայացքով: Սաստիկ զղայնացած այս կարծեցյալ խաղից, նա նրան վիրավորելու համար մի սգամ ամուսնու առաջ բարձր ասաց.

— Ինչու չի անցնում տիկինը մի յերեկո ինձ մոտ... Մենք կիւրիշեյինք այն հիմար և անմիտ որերը, այցի... Մենք կիւրիշեյինք այն համար, — և ապա ծիծայերը յես ախ իշի քում նրա համար, — և ապա ծիծայեց զղայնորեն...

Նինան գունատվեց և փորձեց ծիծաղով ծածկել իր սրաի շփոթը... Բայց մի քանի որից հետո... Այդ անցյալ գարշանամտին եր... Այդ կինը բաղխեց իր դուռը:

Նա իր յերազած այցելունուն բաց թողեց միայն լուսաւեմին: Գաղտնի և հանցավոր այդ կապը շարունակվում եր գեմին: Գաղտնի և հանցավոր այդ կապը շարունակվում եր գեմին: Կյանքում մացնում խորթ, անծանոթ, բայց մի անհաղթելի թովչություն...

— Պետք և վերջ տալ այդ բոլորին: Գուցե արդեն նա վերջ և տրված: Չի վոր յես յերեկ ստորագրեցի նրա յեղբար մահվան հրամանը:

Յեկ նրա սիրու ալեկոծեց մոայլ, պլոտոր մի ալիք... Նա սթափվեց և նորից վերցրեց լրագրները...

Լրագրները աչքի անցկացնելով նա նստեց իր գրասեղանի առաջ և սկսեց հեռախոսել այստեղ-այնտեղ: Հանդարտ և համաշափ աշխատում եր նրա ուղեղի մեքենան:

Թիշ հետո նա իջավ ներքեւ, ճաշեց և վերադառնալով նորից փակվեց իր սենյակում, — այս անգամ սակայն հանգստանալու վորոշումով։ Մինչև քաղակտիվի նիստը Ճժամ կար և նա գետ կարող եր մի փոքր նիրհել։

Ընկնելով բազմոցին, նա մերթ նիրհում եր, մերթ արթնանում, լուս եր ձայներ, մարդիկ վորոնք սակայն սթափման առաջին իսկ վայրկյանից չքանում եցին, փոփոխվում։ Ի՞նչ զարմանալի յե նիրհի այս ստվերների աշխարհը։ Այն, իսկը ստվերների աշխարհ։ Բայց ովքեր են դրանք, ինչ ձայներ են, ում ստվերները, — նա չեր կարողանում վորսալ։

Վորտեղից-վրբտեղ նրա մեջ արթնացավ մի անսահման ցանկություն՝ կարդալու մի մեծ, գեղեցիկ և վեհաշունչ վեպ։ Գրողը տանի, չե վոր նա մանկությունից սիրել եր կարդալ մեծ, խոշոր գրողներին և սքանչացել եր նրանցով, ինչքան ժամանակ ե վոր կտրվել ե նա այդ աշխարհից։ Յեկ ահա, — հիմա բարձրանում ե իր մեջ այդ այրող ծարավը կարդալու և վերապրելու իր յերբեմի ինքնամոռացության համազ վողերության զգացմունքները։ Դուցե նա ուղում եր, նորից իր ձեռքն առնել։ Բայլզակը, Զոլան կամ Տոլստոյը։ Զե. չե, Այդ չեր, վոր մըրկում եր նրա սիրտը։

Ա. որինակ մի վիթխարի վեպ այս որերի մասին, նրա շնորհմաների, հուղումների, քանդման և կառուցման մասին, մի գիրք, վորը կարողանար վրսալ և կենդանի կերպով վերաբարպել ստվերների այն աշխարհը... Ախր կան բաներ, վորոնք անկարող ե պատկերացնել թերթը, մամուլը և... նույնիսկ այն հատ ու կենտ գեղարվեստական գործերը, վորոնք նա աչքի յեր անցկացնում և դժգոհ մի կողմ դնում։

Զե. ինչ գեղարվեստ, ինչ վեպ։ Նա ուղղակի կարիք եր զգում մտածել և խորհել այն բաների մասին, վորոնք որենք անցնում են իր և ամբողջ յերկրի, աշխարհի գլխով։

Կյանքը, կյանքը հիմա մի այնպիսի պայծառ վեպ ե, այնպիսի վիթխարի ստեղծագործական հրաշալիք, վորի յուրաքանչյուր գլխի վրա, — որվա և գեղքի, պիտի խորհել և հասկանալ։

Ահա նրա առաջ կ սնդնում ե այդ վեպի մի գլուխը։

Մի հականեղափոխական սրիկա, այնքան ե ահաբեկվել մահվան սպառնալիքից, վոր հասել ե մի անասելի իմաստության, Ախո ինչու վոչնչացնել իրար, — դասակարգերի համար, — քանի վոր դասակարգերը իրենք չարիք են, — և նրանց վերացնելու համար ենք պայքարում։ Յեկ վերջապես, չե վոր այն մարդը, վոր պիտի ստորագրի իր մահվան հրամանը, պատանի հասակում... սիրել ե իր քորոշը և նրան դուր գալու համար պաշտպանել իրեն, — փողոցի տուր ու դմիոցներից։ Համար համար պաշտպանել իրեն, — փողոցի տուր ու

դմիոցներից։ Համար համար պաշտպանել իրեն, — փողոցի տուր ու

յերբեմն, վոր գնդակել ե այնքան բանվորների, — կարողանում ստորանալ և ընկնել այդ աստիճան և համբուրել իրեն հատուցում տվող ձեռքը։

Յեկ արդ ինչպես այնքան անանուն և անհայտ հազարներ մյուս դասակարգից մահվան դեմն յելան, առանց ջղագարության և կանացի ճիշերի, զսպելով ամեն մի հիվանդ ցցում։

Ինչքան գեղեցիկ, վեհաշուք են հյուսվում դեպքերն ու յերեսյթները կյանքի այս անսահման վեպում։

Նա վեր թռալ տեղից և շաղղողուն հայացքով դուրս քաշեց գրադարակից հնագաշ փոքրիկ մի գրքույք, վորից իրեն ելին նայում յերկու կայծկլառող, ըմբոստ աչքեր և հուժկու մի հայացք։

Դա կյանքի հոյակապ վեպի սքանչելի մի գլուխն եր, վոր նա քանի անգամ կարդացել եր և ուղում եր նորից կարդալ։

Յեկ նա սրտի բարախումով սկսեց կարդալ...  
... «Ճաս տարեկան քուփա հասակից մեզ կտրում են հացից ու քշում հանդա, — աշխատանքի։»

... Մի կաոր չոր հացի համար մենք վաճառվում ենք կապիտալիստին, ընկնում հասակավորների ձեռքի աակ, վորոնք մեզ ուղղիներով և քացով վաղեցնում են մեր ուժերից վեր աշխատանք կատարելու, քնում ենք ուր վոր պատահի, գետնին...»

... Նորից ահա իմ դիմաց նույն ուրվագիծն ե  
ցոլում.  
Ինչ և ուզում ինձանից այդ տարաժամ այ-  
ցլուն:

«... Յեթե ամեն մի պատահած քաղաքապահ հասցնում է  
մեղ, բռունցքով խփում ե մեր քիթուրերանին, քացի յե  
տալիս, քշում մեզ, — ուրեմն... (ով եր դուռը ծեծում)...  
մենք ճորտեր ենք...»

Նա հանկարծ ընթերցումը ընդհատեց,  
— Մտեք.

Հ'ըմ. Նա յեր պակաս այսոր, այս պահին:

— Ա'... Նինա, — նա գիրքը արագ կոխեց գրպանը,  
ինչպես այդ նա հաճախ անում եր մի տեղ շտապելիս:

Նինան վկրցրեց սև վուալը, նայեց նրան իր գունաթափ  
և նվազած հայացքով և նստեց նրա առաջ՝ գահավորակին:  
Տիրեց լուռթյուն...

Նինան ինքն ել չիմացավ թե ինչ ներքին մի բուռ մղու-  
մով բարձրացավ և ընկավ նրա կրծքին:

Սանդրոն շարունակում եր իր հանկարծակի ընդհատված  
մտքերն ու տրամադրությունը կարգավորելու Նինան չեր  
համարձակում սկսել սարսափելի խոսակցությունը, վորը  
կարող եր հանկարծ մի անանցնելի անջրպես ստեղծել  
նրանց մեջ:

Վերջապես Սանդրոն վեր կացավ և սկսեց շրջել:

— Հիմար, հիմար Նինա: Ինչի՞ յես լալիս, Ամեն բանին  
հատուցում կա... Նրա հատուցումն ել այդ ե: Ասա, ինչու  
համար պիտի ապրի նա այսուհետեւ և հանուն ինչի՞ նրան  
ներել:

Կինը հոնդում եր հեկեկանքից և խեղդվում իրեն տիրող հա-  
կասական զգացմունքների ջրապտույտում: Խսկ Սանդրոն մտա-  
ծում եր կյանքի վիթխարի և հոյակապ վեպի նոր այս հանգույցի  
մասին, վորն այնքան անսպասելի յեր, այնքան հանելուկա-  
յին այսորվա այս յերեկոյի համար:

Վերջապես մի փոքր հանգստանալով իր հեկեկանքնե-  
րից, — Նինան ասաց, — Սանդրո, հոգիս, — այսոր դու պիտի

վորոշես մեր կապի խնդիրը... Յեթե դու չաղատես նրան...  
մենք ել չենք կարող... յես ել չեմ կարող քեզ մոտենալ և  
թույլ տէլ...

Սենյակը լոեց մի բոպե: Աղա Սանդրոն մոտեցավ պա-  
տուհանին և մտազրազ սկսեց սուլել: Յեվ դառնալով գեպի  
կինը, ասաց:

— Դու չպետք ե այսոր ինձ մոտ գայիր...

— Նինա, — շարունակեց նա, — ինչ լավ կլիներ, յեթե  
դու չգայիր ինձ մոտ: Աղա այդպես, Նինա, — այդ ինձ հա-  
մար ել քեզ համար ել լավ կլինի:

Յեվ մինչ ասում եր այդ խոսքերը, նրա մեջ բարձրա-  
նում եր անսահման հավատքն ու հաստատուն կամքը, վոր  
վերջապես վրա հասավ այն վճառական շրջադարձային բոպեն,  
վորը բաժանում ե նրա ուղին այդ կնողից: Բայց նույն  
բոպեյին Նինան ընկալ նրա կրծքին և ոձի պես նրա գըր-  
կում գալարզելով մրմնջաց...

— Չեմ կարող անել այդ, Սանդրո, մի ասա այդ... Յես  
քեզ եմ սիրում: Սանդրո...

Նա սիրում եր Նինային և Նինան՝ նրան: Ահա այն պարզ  
ձշմարտությունը, լորի դիակի վրայով անցնել անհնարին ե,  
ինչի շնորհիվ նա հանդուրժում է իր այն կենցաղին, վորը  
հաղիվ թե համատեղելի լիներ իր բոյլշելիկի կոչմանը: Բայց  
ով գիտի, — ինչ կասեր այդ առթիվ կուսակցական բարոյա-  
կանությունը: Նա սփենքսի պես լուռ եր:

— Սանդրո... Դե լսիր, Գիտես վար... ո, դու իհարկե վո-  
չինչ չես նկատում: Դու կոյը ես: Դու յերբեք, յերբեք չես  
սվիրվել ինձ ինչպես պետք: Յես կապված եմ քեզ հետ,  
ինչպես շունը: Լսիր: — Յես հղի յեմ քեզնից... Չե վոր մի  
քանի տարվա կապը նրա հետ ինձ վոչինչ չտվեց:

— Ա'... Այդ շատ ել լավ պատմություն չի: Հըմ. — Նա  
ժպտաց, բայց և մի զվարթ զգացում վոզողնց նրա սիրու-  
թե, Նինա: այդ ինձ ուրախացնում ե, և... սաստիկ ել  
տիրեցնում: Ինչ պիտի լինի նրա վիճակը, ով պիտի  
զաստիարակի նրան: Ընդ ծիծաղելի բաներ եմ ասում:  
Զխոսենք այդ մասին: Թող լինի ինչ լինելու յե: Գիտես,  
Նինա, յես տեսնում եմ վոր մեր կապի հանգույցը մենք

չենք կարող լուծել վորովհետև մեր ձեռները ողակված են  
այդ հանգույցով: Բայց կանքը...

«Կյանքը կլուծի այն» — վերջացրեց նա մտքում:  
Քիչ հետո նա վեր կացավ:

— Ցես պիտի, իսկ դու աշխատիր սիրել իմ սերը դեպի  
կյանքը... և ատել այն, ինչ յես եմ ատում... հասկանում  
ես ինձ Նինա... Դե լսիր, քիչ հետո կվորուան զվարթ հա-  
մազարկեր: Հիշում ես, անցյալ տարի այն առաջին գիշերը:  
Այն գիշերն ել մի քանի սրիկաներ գնդակեցինք... Սիրիք  
այդ զվարթ համազարկերը...

— Զվարթ... համազարկեր... հաղիվ շնչաց նվազած  
կինը:

Իսկ Սանդրոն կնոջ թողնելով իր սենյակում, մի վայր-  
կյանում իրեն նետելով ավտոյում, խելագար թափով սլա-  
ցավ դեպի բերդը, Նրան թվում եր, վոր սենյակի ողը այն-  
պես խեղուկ եր և այնքան մեղկ, վոր իրեն հարկավոր եր  
փոթորկից թարմացած այրված թթվածնի բուրմունքով շնչել:

Այդ բույրը նա առնում եր բերդի ելեկտրականացած  
մթնոլորտում:

## ՄԱՀՎԱՆ ՎԵՐՋԻՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Հոգեարքի և հույսի ջահեր...

Սիամանթու...

— Կարճ ասո՞ւ նրան սատկացրին:

Մի չեկիստի յեզրափակումը

Քարակուռ գնդանի կիսախավարում մահվան սարսափից  
սոսկահար, բռնված խելացնոր ագոնիայով, ասես պատից  
պատ եր խիվում այն մարդը, վորը վոչ մի կերպ չեր ըմբո-  
նում թե ինչպես իրեն, այս հասակում, իր իսկ հայրենա-  
կիցների ձեռքով կարող են գնդակի տալ: Իսկ Փարիզը,  
Տեղան, նրա ցնորքները:

Սակայն այդ բոլորը հիմա միայն կայծկլում եյին նրա  
դիտակցության մեջ: Իսկ այն, ինչով լցվել և հագեցել եր  
նրա վողջ զգայությունը, — զա մահվան սոսկումն եր, գի-  
շերվա ժամը 12-ի գարիւրելի խորհուրդը:

Իիվահարի պես նետվելով բանտի մի ծայրից մյուս  
ծայրը, նա կափկափում եր ատամներն իրար, կանչվառում  
եր զանազ մն ճիշերով և ապա ընկնելով ծղնոտին գալարվում,  
թափալվում եր հոգեարքում հոնդացող գազանի պես, վորը  
վոգեռում ե իր մահվան դեմ:

Դրսում ավելի ու ավելի յեր խտանում զարհուրելի և մա-  
հարեր խավարը: Նրան թվում եր վոր ժամանակը մի խե-  
լագար թափով առաջ և նետվել և ուզում ե իրեն ինչքան  
կարելի յե շուտ դադաղել ժամը տայերկուսի գրկում:

— Ժամը ասայերկնաւու...

Նա մեքենաբար հայացքը նետեց բարձրադիր լուսամուտի  
վանդակապատին, վորի ժանգոտ ձողերը հետզհետե ձուլ-  
վում եյին խավարին և ապա անդիտակցական մի մղումով  
նորից արտասանեց զարհուրելի խոսքը:

— Տասյերկնաւու...

Այդ վանդակապատի քառակուսիներն եր նա հաշվում:  
Նա հաշվում եր վերից վար, հաշվում եր ձախից աջ, հաշ-  
վում եր խառը կարգով սակայն միշտ արդյունքը նույն  
դաժան և զարհուրելի թիֆս եր լինում:

— Տասյերկնաւու...

Հուսահատության կույր մոլուցքով նա սկսեց քաշել իր  
զլիսի մազերը այնքան, վոր ցավը նրա աչքերում արցունք-  
ներ լցրեց:

— Արցունքներ: — Ցեթե նա կարողանար գոնե լաց լի-  
նել, հեկեկալ, արտասվելու... Դա կթեթևացներ նրա կուրծքը  
արորող այս յերկյուղը: Բայց սարսափը քարացը եր նրան  
և համբացը եր, Գոնե կարողա՝ ար աղոթելու... նա յեղել եր  
միշտ հավատացյալ այնքան, ինչքան դա անհրաժեշտ եր  
մի վրացի տոհմիկ իշխանի համար, վորի նախահայրը հըռ-  
չակվել եր մի վանքի կառուցմամբ: Վերջին անգամ նա  
աղոթեց այստեղ գալուց առաջ, Պարիզի Նոտր-դամում: Տեղ-  
լան իր կողքին մորմոքվում եր ջերմեանդության կրակով  
և դա այն ժամանակ նրան թվաց չափազանց լինծու և  
կեղծավոր: Նա հիմա աշխատում եր հիշելաղոթքի խոսքերը,  
և նա հայացքը հառած լուսամուտից յերեղող մթագնած հո-  
րիցոնին, մրմզաց մանկությունից իրեն ուղեկցող ասես  
խնկարույր խոսքերը —

«Հայր մեր, վոր յերկինս և ես,  
Սուրբ յեղիցի անուն քո, —  
յեղիցի կամ...»

— Իսկ վորն եր նրա կամքը, վորն և նրա կամքը:  
Վոր նա մեռնի: Ինչու այդպես դաժան ու բանդադուշալից  
և հնչում այս խոսքը.

— Յեղիցի կամքը քո...»

Նա չկարողացավ աղոթքը շարունակել վորովհետև վան-  
դակապատի ձողերը նորից նրան համբորեն և լոին շըն-  
ջացին:

— Տասյերկնուս... Տասյերկուսին...»

Նա կատաղությամբ կծոտեց իր դաստակի կակուղ մկանը:  
և ցալից զգաստացավ:

Պետք եր հավաքել ուժերը և խորհել մի յելքի մասին:  
Պետք եր այդ մահվան բաժակը հեռանցնել գոնե այսոր,  
ժամը տասյերկուսին: Ինչ ուժ կարող և նրանց ստիպել  
գոնե մի որով խնայել նրա կյանքը, հետաձգել վճիռը, կա  
նման մի ուժ: Զկա, չկա: Նրանք անողոք են, անգութ,  
նրանք ծարավ են իր արյան: Ոհ, տեր-աստված: Ինչու յեն  
նրանք այդպես ծարավի նրա արյան, և այն ել հիմա: յերբ  
այդ արյան մեջ չի մնացել գուց վոչ մի կարմիր գնդակ,  
յերբ նա պատրաստ ե ընկնել բոլորի, բոլորի վուներին և  
կյանք աղերսել: յերբ նա պատրաստ ե ապրելու համար  
դառնալ հետին մի ջրկիր, ինչպես մանկության հուշ զարձած  
յերկար ալեներ միրութով ջրկիր խուլ Ալիոն: Այս, այս... թե-  
կուզ ջրկիր Ալիոն... Միթե նրա զղջումը վոչինչ չի ասում  
այդ մարդկանց քար սրտերին, ինչու նրա մահվան աղերսը  
չկակեց նրանց սիրտը: Չի վոր նա ասաց, կրկնեց մի քանի  
ձեռքով վոր նա ավերակների յե վերածված, վոր կյանքը  
նրան այլև չի ժամանեմ, վոր նա մահ ե տենչում... ել ին-  
չու... նրանք, իր հակառակորդներն ու դահճները... չեն  
վարվում նրա խնդիրքին հակառակ և կյանք տալիս նրան: —  
Եյանքը ինձ համար այլև դժողը եռ, — գրեց նա իր զղջում-  
նազրում... Ո, յեթե նրանք դատապարտեցին նրան այդ  
դժողըում տառապելու տանջանքների...»

Հիմար, հիմար մտքեր, Յեվ նա կարող եր հավատաւ, վոր  
նրանք կիսարվեն: Պարզապես պետք եր ցնորված լինել  
այդպես կարծելու համար:

Ցնորված... Հըմ: Գուցե ինքը... իրոք ցնորված ե: Այդ  
դեպքում... չե վոր նա կարող և փրկվել մահից... Փրկու-  
թյուն... Նա լավ գիտի վոր խելազարներին չեն գնդակա-  
հարում, նրանց փոխադրում են խելազարանոց... բուժվելու:  
Այնտեղից ծլկվել հեշտ կլինի: Յեվ մի բողե նրան այնպես  
պարզ թվաց իր փրկության ճանապարհը: Բայց շուտով  
նրա ուրախությամբ վողողված հայացքը աղավաղվեց մի  
ներքին տանջալից ցավով:

— Զեն հավատա... կենթարկեն եքսպերտիզայի... կեղ-  
ծիքը կբացվի և նա կմեռնի նորից ավելի խայտառակ՝ մա-  
հով: Թերթերը նրա մահվանից հետո յել ծաղը ու ծանակի  
յեն յենթարկելու իր հիշատակը: Այսպես գոնե... նա կմեռնի  
վորպես քաղաքական հակառակորդ... վորպես հերոս...

Հերոս... Միթե նա կարող ե մեռնել հերոսի պես: Ի՞նչ  
ե այդ հերոսությունը, վորը ստիպում ե մարդու խոնարհ և  
անբարբառ ընդունել որհասական գնդակը իր կրծքում:  
Ծաղը և այդ, հեգնանք, վորը հնարել են այն մարդիկ, վո-  
րոնց չի սպասում վոչ մահ, վոչ կախաղան, և վորոնք մեռ-  
նողների վրա նայում են ինչպես անշունչ մեքենայի վրա:  
Ո՞վ ե այն ցնդաբանը, վորը կասի, թե սառնարյուն և  
անահ կերպով մահ ընդունելը առաջինություն ե, հերոսու-  
թյուն: Ո՞վ ե այն նենգամիտ ծաղրաբանը, վորը կասի թե  
իր կյանքին ամբողջ եյությամբ, զդերով և փերբերով հուսա-  
հատորեն կառչելը, վախկոտություն ե... Ո՞վ:

Անդրեյ Կալաձեն. — ոռեւ ե, նա յել եր մի քանի տարի  
առաջ սարսափահար յեղել մահվան ուրվականից:

— Ուրվականից: իսկ այստեղ ուրվականը կյանք և ար-  
յուն ե առել և խոսլու շնչում ե. —

— Ժամը տասյերկուսին:

Յեվ այդ վողորմելին, վորին ինքն եր աղատել մենշելիկ-  
յան բանտից՝ համարձակվում եր իրեն ասել. — Մեռիր հե-  
րոսի պես:

Սուր ե. հերոսներ չկան և... դուցե չեն յեղել։ Նա հիշեց մի քանի ընկերների, վորոնց իր կուսակցությունը թաղեց հերոս մակդիրով։ Բայց նրանք բոլորն ել մորթապաշտ, վողորմելի մարդիկ եյին։

Վերջապես նա հիշեց իր կուսակցության պատկառելի նահապետին, Նոյ ժորդանիային, վորի մասին նա այնքան հաճախ լսել եր կուսակցական մի շարք ղեկավարներից այնպիսի հերոսություններ... ինչպես որինակ... կուսակցության գաղտնի գործնեյությունը ցարական ժանդարմերիային հայտնելը, իրեն բանտից ազատելու համար։

— Վոչ, հերոսներ չկան ու չեն յեղել...  
Բայց... Այդ ի՞նչ եր ասում Սանդրոն։

Սանդրոն... Հերոս ե նա, թե վոչ։ Կարող ե նա մահվան դեմ դուրս գալ իր այնպես առողջ, լայն, ծիծաղկոտ յերեսով։ Չի սահմակվի, չի դողդողա հրացանների փողերի դեմ։ Հը՛մ. ձվ գիտի։ Ախր Սանդրոն ի՞նչ մարդ եւ կիսավայրենի, անզգա, անսիրտ։ Ինչ իմանա ինչ ե մահը, ինչ ե նրա փիլիսոփայությունը և նրա խորհուրդը։

Վոչ-վոչ. վախկնա, ստոր հոգի։ Խոստովանվիր, խոստովանվիր գոնե ինքդ քո առաջ, վոր Սանդրոն և նրա նմանները, այս, այն ջուրհակը, վորի մասին ասում եր նա, — նրանք են հերոսները։ Խոստովանվիր, վոր հերոսներ կտա և կարող ե տալ այն գասակարգը, վորից դուրս են դալիս նրանք։ Այդ գասակարգը... Միթե այդ կեղտոտ, բոկոտ և անկերթ ամբոխին իրո՞ք վիճակված ե հրդեհել հեղափոխության կրակով այն պիրճ ու մեղկացած քաղաքները, — Պարիզը, Մարսելը և... ել հեռու Նյու-Յորկը — նոր աշխարհը։

Ախ, այս. նրանք մեղկացել են ու ընկել են հոգնաբեկ մի թմրությամբ, նրանք գալարվում են ֆոքստրոտի անկրակ կրքերի մահճում և չեն տեսնում, ինչպես խնճույքից հարբած ու նվազած այն շքեղ թաղամասերի ֆոնի վրա բարձրանում ե արյունաբու հեղափոխության կարմիր, վրիժառու հայացքը... Սանդրոյի կերպարանքով։ Ո՞հ, յեթե նա կարողանար ճշալ հուժկու, բարձր և հզոր ճայնով նրանց ականջին։

— Յելեք... յելեք... գալիս ե, մոտենիւմ ե... նա. թըշնամին, — գասակարգը... Մահը...

Միթե նրա ծայնը չի կարող սթափեցնել այդ նիրհուն քաղաքներին, այդ հաշիշով հագեցած շքեղ պալատներին։

Նրա տչքի առջևով մի վայրկյանում անցան ֆրանսիայում տեսած վիթխարի, սպառազեն բանակները, հզորազոր այն սաղմական աերոդրոմը, վորը մի ըովեյում կարող եր ցերեկը գիշեր դարձնել, ծածկելով յերկինքը, այն հսկայական գործարանները, վորոնք այնքան գաղ ու թույն են արտադրում, վոր հերիք կանի մի քանի Ռուսաստան խեղկելու համար, — և նա ուզում եր բարձր ճչալ։ —

— Բարձրացըք, հսկեր... Սպանում են... գնդակնեմ։ Զեզ ել կդնդակեն, յեթե չսթափվեք։

Տեր-աստված. ինչ ե այս. միթե նման մի վիթխարի ուժ անկարող ե արորել այս ծայր առած ահուելի հրդեհ։

Ու այն ժամանակ նորից նրա աչքերի առջևով անցան այն բազմաթիվ սպաններն ու սպայակույտերը, վորոնք քաշ եցին գալիս կաֆեներում ու սալոններում, այն վողջ հասարակությունը, վորը որվա գործնական մասում իրար կոկորդից բռնած կոփ եր տալիս դրամի համար... յերկրի այն հզոր մագնաստները, վորոնք բանկերի և գործարանների միջոցով իրար խեղդու եյին, խլում իրար բերանից հարստության պատառը... իսկ յերեկոյան քաշ եյին գալիս ոթելներում և բարերում...»

Նա սարսաց, սրսփաց մահվան մի նոր, անսակելի սարսափով։ Դա իր գասակարգի, իր հասարակության մոտալուտ և անխուսափելի մահվան սարսոււն եր, վորը թափանցեց նրա վողջ եյությունը։

— Կործանվում ենք, — շնչաց նա և վայր լնկավ...  
... Բայց նրան վեր հանեցին և թեերի տակից բռնելով՝ գեպի դուռը տարան։

— Ո՞ւր... խոպոտ և ահով շնչաց նա։  
— Զեզ հայտնված ե այդ մասին։ Արտակարդ հանձնաժողովի վորոշումով։

Նա հանձնվեց յերկու դույգ ուժեղ ձեռներին և մթաղնած հայացքով սկսեց դիտել շուրջը, դիտել եր շրջակա այն մոայլ գծերն ու տոները, վորոնք նրա զգայական աշխարհի վերջին տպավորություններն եյին։

Աւայերկար ու կուռ կամարներով ու վորմերով ձգվում են հսկայական միջանքը իր հանդիպակած խորշերով: Դրանք մյուս զնդանների դռներն եյին: Ամեն մի խորշում ասես կանգնած եր մի դավադիր սպառազեն մարդ... ևս կաշվերածկոնով: Վոչ, դրանք աղոտ ստվերներ եյին միայն:

— Այս ուր ենա... Ովքեր են այդ մարդիկ, Այն մեկը — Սանդրոն եւ իրեն ընթատակերից բռնողները փորձում են բաց թողնել, բայց տեսնելով վոր նա կընկնի, շարունակում են բռնել:

Բայց ահա նա վոտքի վրա յեւ, նա դանդաղ, լուսնոտի նման քայլերն ուղղում եւ դեպի այն չուգուն մարդը և հիմնոսվածի պես, աչքերը սեեած նրա ծուլածու դեմքին թոթովում եւ, և խոպոտ ձայնով:

— Սանդրոն... Յես պարզ տեսա... Մեր վողջ գասակարգը կործանվելու յեւ, ինչ ել լինի... կործանվելու յեւ Հերոսները դուք եք... դուք ել կհաղթեք... Բայց... Սանդրոն... Ել ինչի՞ յեք մեզ գնդակում... ինչի՞ յեք խփում ընկածին, Սանդրոն...

— Ա՛, նորից մահվան իմաստություններ: — Նրա համար, սիրելի Սաքավելի, վոր դա կարգացնի մեր հաղթանակը: Դու շատ լավատես ես, յեթէ կարծում ես, թե մենք հաղթելու յենք, ինչ ել վոր լինի: Զեր քաշերը այսոր Ամերիկայում յերեք հարյուր գործադուլավոր չուլսակների դիակներ են փռել, իսկ Դերմանիայում... Հըմ մի քիչ ել հոռետես, վոր կարծում ես թե դուք արդեն այնպես ընկել եք, վոր... ել հարվածել ձեղ — ավելորդ ե...

Նա խոսքը չկարողացավ ավարտել, վորովհետեւ նույն րոպեյին տեսավ թե ինչպես իր զեմ վոտի վրա որորվող և մահադիմ մարդը, վորի հայացքում նա տեսնում եր իր հանցափոր սիրո առարկա կնոջ դիմագծերի մի հեռալոր արտացոլումը, — հանկարծ խոնարհվեց և ընկալի: Նա յետ-յետ գնաց, վորովհետեւ զդաց ինչպես զղաճգվող զույգ ձեռներ գրկում են իր վոտները, Սոսկումից խելացնոր այդ մարդը ինչ-վոր խոպոտ շնչում եր և վոչ-վաք շրջապատողներից չեր հասկանում, թե ինչ լ ասում նա: Բոլորի յերեսին մի խոր ատարակուսանք և ի՛չ-վոր հուզմունք կար:

— Ի՞նչ ես ասում, վախկնա յերեխսա, վեր կաց և պարզ ասա, — գոռաց հանկարծ ջղագրպիո Սանդրոն, վորին մի վայրկան թվաց, թե այդ նինան եւ ընկել իր առաջ և յեղբոր համար փրկություն խնդրում: Բայց հաջորդ ըոպեյին նա զգաց, վոր այս բոլորը այն մեծ վեհաշունչ վեպի միգլխիշարունակությունն եւ, ուր նա կարդացել եր թշնամի դասակարգի բարոյական անկժան և ստորաքարշության մասին:

— Կյանք... կյանք եմ աղերսում, — խուլ ձայնով մոըլտաց գետինն ընկած ցավագալար մարդը:

— Կյանք, — զգվածքով յերեսը շրջելով ասաց Սանդրոն, — վախկոտ, վալսա, հիշիր գոնե քսան թվին կատարած գաղանություններդ, և հերերով նրան դուրս յեկափ բակը, արեց մի քանի ցուցմունքներ իր հետ դուրս յեկող ընկերներին և ավտոն լարելով սլացափ քաղաք:

Սաքափելուն վեր բարձրացրին: Կարդացվեց նրա դարմագիւռ, վորի ընթացքում նա բութ և գունաթափ հայացքով նայում եր մի կետի: Նրան տիրեց մի խորին հոգնություն ու անտարբերություն դեպի ամեն ինչ, Յեղրափակիչ պարբերությունը, վորը վերջանում եր — «յենթարկվում եւ գնդակահարության» խոսքերով, նա զրեթե չլսեց:

Ապա նրան բռնեցին և մոտեցրին սեղանին ստորագրելու գատավճռի կատարման թուղթը... Նա յետ-յետ գնաց և ասես հանկարծ սորից սթափվեց իր թմրությունից և անդրադապ իր շուրջը կատարվածին, բայց հետո աչքերը փակեց, ասես ուղենալով նորից մոռացման գիրկն ընկնել և մեքենաբար գրիչը վերցրեց:

Նա զգաց ինչպես շոշափում և գրիչը, ինչպես խշխում եր ձեռքի տակ թուղթը, ինչպես թղթի վրա թանաքը գծագրեց ձանոթ ստորագրությունը:

— Ա՛... դուք Փրանսերեն եք ստորագրում, — մոլտաց մեկը առնելով թուղթը, — գովելի յեւ...

Նա անդրադապավ: Վերջին տարիներին նա ամենուր ֆրանսերին ստորագրելու անհրաժեշտության եր հանդիպում: Յեկ ահա այժմ այստեղ վրաստանի գատավճռի տակ նա մեքենաբար ստորագրեց այն յերկը լեղվով, վորից նա ուղարկված եր իր յերրեմի հայրենիքը:

— Տվեք... վրացերեն...

— Միւնույն եւ Դուք ճիշտ ստորագրեցիք...

## ԶՎԱՐԹ ՀԱՄԱԶԱՐԿԵՐԸ.

Քաղաքի վիթխարի թատերասրահը, մինչև վերջին ոթյակն ու վերնահարկը ծփում եր հսկայական բազմության ալիքներով, և լուսում եր խուռն ու միալար մի ժխոր, վորն ասես բազմաթիվ լարված մեքենաների մոռոցը լիներ։ Տեղ-տեղ իրար գլխի եյին հավաքվել մի խումբ ընկերներ և լուսում եյին մելին, վորը տարված հիշողության հիպնոսով, ասես անտեղյակ իր շրջապատին՝ խոսում եր, պատմում այն լեռների ու ծերպերի մասին, վորոնցով նրանք մագլցեցին ու բարձրացան, քարերի մասին, վորոնց տակ պառկած՝ նրանք կրակ բաց արին, մարդկանց մասին, վորոնք ընկան։ Նրան մերթ-ընդ մերթ ընդհատում եյին զանազան հարցմունքներով։ Դեպքերի մասնակիցն ու ականատեսը ասես դուրս գալով ինքնամոռացության կախարդված շրջագծից՝ պատասխանում եր հարցերին և հոգոց հանելով յեղբափակում։

— Մի խոսքով՝ տաք կռիվ եր... Հետո յել լավ քննություն՝ մարդկանց իսկական տրամադրությունները պարզելու համար։ Պարզ յերկում եր, վոր կային մարդիկ, վորոնք սպասում եյին թե կենքի վճռ թաթը ավելի կծանրանա, վոր իրենց նդ թաթումն ել գցեն։ Մյուս կողմից ել ինչ տղերք կային, ինչ տղերք, վոնց եյին կռվում...

Բայց հանկարծ ամբողջ դահլիճով սկսեց թեթև քամու պես անց կենալ „շշ...”-երի հեքը։ Խուլ և միալար ժխորը սկսեց կամաց-կամաց հասապար դառնալ, վերջապես ամենքը լուցին աշքը նետած կարմրավառ դրոշների բոսորագույն փայլով վողողված քեմը։

— Քաղաքային կուսակահիվի ընդհանուր ժողովը սկսում եմ, Բուռն և յերկար ծափերի տարափի տակ զեկուցողը ասես մի վարկյանում փոեց բոլորի առաջ վողջ յերկադիմի քարտեղը և նրա վրա սկսեց նկարել վերջին որերի դեպքերը։ Մի քանի վարժ և հուժգու զծերով նա արդին

գծագրեց Արևմուտքի և նոր աշխարհի վրա բազմած այն վոսովին, վորի դիմանկարը գրեթե ամեն որ ունկընդիրներից յուրաքանչյուրը տեսնում եր լրագրների առաջին եցի աջ անկյունում։ Դա մի ահոելի ճիվաղ եր, մի սարդ, վորը պարզած իր ըյուրափոր շոշափուկները յերկրագնդի բոլոր ծայրերը, արյուն և վոսկի յեր քամում և թույն ու մահ տարածում բանվոր, չարքաշ բազմությունների մեջ։ Յեղ ահա այդ թունավոր շոշափուկների մի թելը գալիս և մտնում Վրաստանի կենդանի յերակում։ Յերկրից քշված, մենշերիներն ու կնյաղները անգլիական ու ֆրանսիական վոսկով թեսավորված փորձում են ապստամբություն բռնկեցնել Վրաստանի այն շրջաններում, ուր ամենից ավելի թոյլ եյին մեր կազմակերպությունները։

Յեղ այնունետես զեկուցողը ծավալում է վերջին դեպքերի իրական և վառ պատկերը, ավանդյուրայի խճուղի անկումը, զեկավարների վողործելի մեղադրականները։

Մափերի տեղատարարափը ծածկեց հոեաորի վերջին խոսքերը կուսակցության լենինյան կամքի միաձուլության պահպանաման մասին։ Տեղերից արագ բռնկում եյին զանազան մարտական լոգունգներ, վորոնք համակում եյին վողջ դահլիճը։

Մափերի խուռն ամբոխը վողջունում եր հանդես յեկող յերկաթուղային, մետաղագործ բանվորներին, Ն գնդի հերոս ռազմիկներին, վորոնք թնդացնում եյին վողջ դահլիճը. պահանջելով անողոք լինել զեպի հաշտվողական թարախը, չխնայել և անխնա տրորել հականեղափոխական իժի գլուխը, նրանք ըռոռոա եյին նետում Զեկայի հասցեյին, վորն այնպիս անողոք ու վճռական հարվածներով շշմեցրեց թշնամուն, և այդ նետփած ուռաները հղոր դղրդոցով արձագանքում եյին բոլորի սրտերում, միախանովում եյին իրար և գոյացնում մի չտեսնված խանդավառ ովացիա։ Դահլիճը և նախագահությունը վոտքի կանգնեցին և ահա այդ բուպեյին Մոսկվայից նորերս այստեղ ուղարկված Սոկոլովը ևս, վորը դեռ չեր կարողանում ըմբռնել արտասանվող ճառաների թշեկուզ հեռավոր իմաստը, — հասկացավ, վոր վորուացող դահլիճը վողջունում և Զեկային, — հեղափոխության թշնամիներին պատժող այդ ճեռքին։

— Ուր և Սանդրոն, — անցավ նրա մտքով և այդ բուլեյին նա տեսավ կուլիսներում միշտ անփոփոխ իր գիրքով՝ ձեռները բաճկոնի զրպանները կոխած, ժպառն Սանդրոյին, վոր ուրախ կկոցած աչքերով իրեն աշխատում եր պոկել այն ընկերներից, վորոնք համողում եյին նրան անցնել նախադահության կազմում:

Սոկորվը մի վայրկյանում վեր թռավ և գրկելով նրա մեջքը՝ նրան բեմը քաշեց: Բարձրացավ մի բուռն ու զվարթ աղմուկ, ծափերը վորոտացին նոր ուժով, ամբողջ սրահը և կեկտրականացած զիտում եր և խանդավառությամբ վողջունում բանվոր և պրոֆեսիոնալ հեղափոխական այդ բոյլշնիկն, վորի անունը վերջերս նորից սարսափով կամ պարձանքով անցնում եր բերնից-բերան...

— Սանդրո-ու... Սանդրո...

Նախագահը արագ վեր թռավ ու թեքվելով դեպի նա ուրախ շնչաց:

— Հերիք և ավարայություն անես, — փորձիր մի քանի խոսք ասել, ամոթ ե, — պիտի սովորե՞ս վերջի-վերջո մարդկանց առաջ դուրս գալ, — թե չե...

— Աղի... Ձեռք քաշի: Եսքան ժամանակ աշխատել եմ և առանց ճառ ասելու յոլա յեմ գնացել... Հիմի նոր պիտի հոեառորություն սովորեմ: Յեզ նա աշխատում եր պոկ գալ նրանից և ծլկվել բեմի յետել:

— Զե. թողնողը չեմ. ես անգամ չես պրծնի, — և ապա դառնալով դեպի դահլիճը ասաց. — Լոռություն, ընկերներ, Սանդրոն ձեր լուելուն և սպասում, վոր մի քանի խոսք ասի ձեզ այն մասին, ինչի մասին ընկերները հանդես յեկան և խոսեցին...

Տիրեց լոռություն և Սանդրոն անշարժ գերու պես մնաց բեմի մեջ տեղում:

— Այսինքն, — շարունակեց նախագահը, — հակահեղափոխական պարագուխների նկատմամբ հանգած վորոշան մասին,

Բարձրացավ ծափերի նոր ալիք և Սանդրոն միշտ ժպտուն, սրբելով ճակատի քրտինքը, հոնքերը կիտեց, ասես կամենալով վորոշել ինչից սկսել:

Նա այդպես բավական յերկար մնաց, — անշարժ և լարված և դահլիճը վորը ասես ապրում եր նրա լարված հուզումը, — անշարժ սպասում եր...

... — Մեր թշնամիները, — ասաց Սանդրոն, և հիշեց վոր նա պետք ե սկսեր «ընկերներ» դիմումով, — հաղթվեցին այս անդամն ել... — Նրանք հաղթվեցին, հենց վոր մեր աշխատանքի դասակարգը բարձրացրեց իր մուրճը... Բայց որենք չի, վոր ամեն տեղ, ուր կովում են բանվորն ու կապիտալիստը, հաղթեն բանվորները: Շատ հաճախ լինում ե հակառակը: Բավական ե հետեւ Գերմանիայի, Ֆրանսիայի գեղգերին... կապիտալիզմը դեռ այնքան ուժեղ ե, վոր կարող ե առանձին հաղթություններ տանել: Բայց, ընկերներ... — Նա լարեց իր միտքը և աչքը հառած ինչ-վոր կետի շարունակեց, — կապիտալիզմը արդեն կորցրել ե իր կենսական ուժերը: Նա, վոնց ասեմ... դառնամել ե, քափթառացել, շունչ ու հոդի կարծես չի մնացել նրանում: Վերցրեք նրանց հերոսի հոչակ ունեցող մեզ մոտ շնորհ բերած պարոններին: Այդ ինչ վալաս մարդիկ եյին, վորքան ընկած յէն նրանք իրենց բարոյական նկարագրով: Նրանք շունեցին այլևս իրենց դասակարգի մարտական գիտակցությունը, նրանք կորցրել եյին քաղաքական հակառակորդի գեմքը: Յերեւի կարծում եք թե նրանք զղացել եյին: Ինչու չե. կարելի յե ասել նաև վոր նրանք զղացել եյին, քանի վոր նրանք այնքան ընկել եյին բարոյակես և բռնվել անասնական վախով վոր... պատրաստ եյին և զղաւ և արտասվել, աղերսել հերոս ձեանալ ու առյուծ կարեւ ապաշխարող դառնալ ու սողալ մեր առաջ մի խոսքով... վոնց վոր մեզ մի ծանոթ յերգումն և ասվում, —

«Կուզես բոյլշեիկ ելնեմ, կուզես մենշևիկ ելնեմ»...

ամեն, ամեն ինչ... միայն թե նրանց կյանք տվիր, միայն թե կարողանային ազատվել մեր դասակարգի վրիժառությունից...

Հերոսի համբավ ունեցող Սաքավելին, վորի մասին խոսում ե մեր քաղերնին այդ վախկոտներից վոչնչով բարձր չեր, թեպետ նա մեր թերթերում աղմուկ եր հանում և կուրծք եր ծեծում մաս: ինդրելով իրեն... վոր իրեն կյանք տրվի:

Բարձրացավ մի թեթև ուրախ հոհոսցի ալիք:

— Մեր դասակարգի առաջապահը այդպիսի վողորմելի վախկոտներ չի ունեցել... Մեր ընկերները Ռուսաստանում թե Կովկասում, Գերմանիայում թե ուրիշ տեղեր պայքարել են և ընկել թշնամու գնդակից, իրենց դասակարգի պայքարի հոգարտ գիտակցությամբ: Յնս հիշում եմ շատ այդպիսի դեպքեր... ժամանակը չի զբանց մասին խոսել... Մեր դասակարգը հերոսներ ե տվել... վորովհետեւ նա...

Վայրկենական մի մոռյլ անցավ նրա դեմքով և նա գլուխը հակելով շարունակեց: — Մեր դասակարգը... և զգաց, վոր միտքը խաճնվում ե և կարող ե խոսքի թելը կորցնել, ինչպես այդ լինում եր ուրիշ յելույթների ժամանակ, — նրան շփոթեցրեց այն գիշերը, յերբ նա լցվել եր վրեժի և բուռն կատաղության զգացումով գեպի իրա դաշիճները, վորոնք իրեն շուտով պիտի գնդակեյին և այդ միտքը վայրկենապես մոտեցավ Պյոտր Ալեքսեյևի ճառին ու նա զգաց վոր իր ժամաները ջղաձգորեն շփում եյին գրպանում կոխած փոքրիկ գրքոյկը: Նա ազատ շունչ քաշեց և զվարթացավ:

— Մեր դասակարգը տվել ե այնպիսի հերոսներ, վորոնք նետել են իրնց թշնամների յերեսին... նրանց ով լինելը... Դարձյալ լուրթյուն...

— Այստեղ նախագահը արդեն ասաց, վոր յես լավ չեմ կապում իրար, — Ժպտաց նա, — բայց նա չփիտեր, վոր յեթե յես լավ չեմ խոսում, յես կարող եմ իմ ճառը կարդալ ձեր առաջ...

Նա գուրս քաշեց փոքրիկ հնամաշ գրքոյկը և ցնցելով բարձրագոյ ասաց, — յես իմ ճառը կարող եմ շարունակել այստեղ տպագրված մի բանվոր հեղափոխականի ճառով... Զուլհակ Պյոտր Ալեքսեյևի ճառը ցարական սենատի նիստում... «Մեր դասակարգը տքնել ե, ամրացել ու կոփել աշխատանքի և զրկանքի հնոցում և զրա համար ել նա... պատմության առաջ ձեռք ե բերել հաղթողի, դիկտատորի, գերիշխանի պատմական իրավունքը»:

Բարձրացավ մի խումբ ծափերի ճարճատը, բայց լարված բազմությունը լցրեց «ո յուս...» բացականչություններով և Սանդրոն շարունակեց:

— Իսկ բուրժուազիան քայքայվում ե, փլչում... Բուրժուազիան... նա տվել ե մեծ հերոսներ, տվել ե, այս. նա տվել ե Դանտոն, տվել ե գեկարբիստներ, տվել ե... և ուրիշներ: Բայց այդ այն ժամանակվա պայքարող դեռ ջանել բուրժուազիան եր: Հիմա նրանցից մնացել ե մի հսկա ամբոխ, մի մորթեղաշտ, ընկած, շահախնդիր գարշելի մի ամբոխ... մինչդեռ արդեն քանի տամայակներ պատմության փոնի վրա բարձրացել ե... մեր դասակարգի հերոսական հասակը... Այն դասակարգը, վորը միայն ընդունակ է վերելքի, ստեղծագործության և հերոսական պայքարի:

Մեռելներին կարոտողները թող գնան մեռելների մոտ, — մենք նրանց կոգնենք, — բայց չենք թողնի, վոր մեռելը քաշեն մեր կենդանի պայքարող շարքերը... Վորովհետեւ... պայքարը դանում է ավելի լուրջ. բարդ, զժվարին, Հաղթանակը ինքն իրեն չի գալիս: Մենք մեր այդ հաղթանակները ձեռք ենք բերում վիթխարի, հերոսական ջանքերով: Պիտի ասենք, վոր հերոսների մասին զուր եմ խոսում, հերոսները չեն, վոր պիտի փրկեն մեզ... Հըմ «Ենտերնացիոնալը» յես ել լավ գիտեմ: Բայց լանը նրանումն ե, վոր յես խոսում եմ դասակարգ - հերոսի մասին: Մեր նպատակներն այնքան են մեծ, պայքարն այնքան և դժվարին, վոր մեր վողջ դասակարգը մինչև վերջին բանվորը լցվի հերոսական պայքարի, հերոսական աշխատանքի վճռականությամբ... կարծեմ վոր... յես ճիշտ եմ դատում ընկերներ, — ասաց նա և ժպտակից գրասնումով չափեց դահլիճը ու նախագահությունը

— Ճիշտ ե, Սանդրոն, շարունակիր, լավ ես ասում, — լսկեցին ձայներ ամեն կողմից:

— Ել ինչ ասեմ: Մեր թշնամին զառամել ե ու ընկել, իսկ մեր յերկրում նա արդեն հոգի յետ տալիս: Հին թավաղուների ու կնյաղների Վրաստանին վերջ, Այդ Վրաստանի վերջին թափիթուկներին մենք գնդակի յենք տալիս... հենց այս գիշեր: Մենք նրանց հանդիպ անողոք ենք և վրիժառու, վորովհետեւ մենք գիտենք թե ովքեր ենք կորցրել մենք այդ դաշիճների ձեռքից, վորովհետեւ մենք սովորել ենք և գիտենք դասակարգային պայքարի յերկաթետրամաբանությունը, ի ող վոռնա և հեծեծի հին մեռնող

Հըաստանը այդ զիակների վրա: Բանվորների և պյուղացիների աղատ Վրաստանը խնդության զգացումով կլսի... այս գիշերվա լոռության մեջ վորոտացող զվարթ համազարկերը... կայն բաց արեք ձեր լուսամուտները և լսեք այդ հըացանային կանոնադան... Յես միշտ այդպես եմ անում... Չի վոր այդ համազարկերը մեր զասակարգի հատուցման և արդար վրեժինդրության վորոտի ձայներն են...

Ու տիրեց մի խոր և վիթխարի լոռությունն... Հետո հանկարծ միանգամից ծափերի խլացուցիչ մի զղբյունով այդ լոռությունը կործանվեց: Կանչերն ու վողջույնի աղաղակները ասես ցնցում եյին հոկա թատերամրահը և նախագահը անկարող եր նույնիսկ փորձ անել ժողովը շարունակելու...

Իսկ քիչ հետո գեղի քաղաքի բոլոր յերակներով հօսող այդ հոծ մասսան խնդությունից ուժգին տրոփող սրտով լուսում եր հուժկու համազարկային կրակ և հեռավոր ու խլացիչ վորոտ:

Թնդում եյին հըացանային համազարկերը:

Վորոտում խորտակիչ զինամիտը...

Քաղաքից դուրս և նրա ականջի տակ ապառաժուա ձորում նույնիսկ գիշերվա այս ժամին, լարված տեսդով շարունակվում եր մարդու պայքարը բնության դեմ, — որ առաջ ավարտելու վիթխարի ջրաելեկտրոկայանի կառուցումը:

Ռազմի այդ ընդհանուր համերգը տարածվում եր քաղաքի և պյուղերի վրա:

Յեվ այդպես բարձր ու վեհաշունչ, կես գիշերվա լոռության մեջ դղրդում եյին զվարթ համազարկերը:

## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ՝ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՐՋԱՆԻՑ

ՄԱՅՐԸ — Ֆ. Բերեզովսկիյ . . . . գինը 45 կոպ.

ԳԱՅԼԵՐԸ — Ֆ. Գաղկով . . . . » 25 »

ԶԱՂԱՑՊԱՆ

ՈՏԱՊԱՅ — Ա. Ֆրունզ . . . . » 20 »

ԶԱՊԱՅԵՎ — Դ. Ֆուրմանով . . . . » 50 »

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ

ՊԱՏՄՎԱԾՔ — Ա. Յակովլև . . . . » 20 »

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ — Ֆադեյկ, Նիկոլայով, Սեմյոնով . . . . » 30 »

ՏԱՍՆԵՐԿՈՒ ՏԱՐԻ

ԱՌԱՋ — Յանվոր Հայկ (ԳԱՅ) . . . . » 25 »

ԲԵՐԵԶԻՆԱՅՅԻ ՎՐԱ — Ա. Կոտով . . . . » 15 »

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

ՈՐԵՆՔԸ — Տկալիչ Գնեւրովսկիյ . . . . » 12 »

ՄԻ ԿԻՆ

ԳՆՈՒՄ Ե... — Հովհաննես Մելիքյան . . . . » 15 »

ՅԵՐԵՔ ՄԱՀ — Ա. Ֆադեյկ . . . . » 30 »

(Հատված)

ԴԱԻՐԻ ԱՆԿՈՒՄԸ — Ա. Մալիշկին . . . . » 15 »

(Հատված)

ՓՈՐՍՈՂՆԵՐ — Լեռնավ . . . . » 15 »

(Հատված)

ՀՐԱՄԱՆ — Մոմիկեսսի . . . . » 20 »

(Հատված)

ԿԱՐԱ ԿՈՒՄԻ  
ԱՎԱԶՈՒՏՆԵՐՈՒՄ — Միսին . . . . » 20 »

## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆԱՅԵԿ

### ԿԱՆԴԱԼՆԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ — Ն. Լյաշկոն . .	գինը	20	կոպ.
ԶՈՐԱՑՈՂ ԹԵՎԵՐ — » . . . .	»	25	»
ԸՆԿԵՐ ՎԱԼՅԱ — Մ. Յուրիին . . .	»	15	»
ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴ ԳՐՈՂԸ.			
ՄԱՐԴԸ — Մ. Գորկիյ . . . .	»	15	»

### ՄՐՐԿԱՀԱՎԼԻ ՅԵՐԳԸ

ՅԵՎ ՈՒՐԻՇ ՊԱՏՄ. » . . . .	»	15	»
ԱՐՏԱՍՈՎՈՐԸ — » . . . .	»	40	»
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ — Ա. Սերամինովից »	»	45	»
ՅԵՐԿՐԱՇԱՐԺ — Գ. Կայաս . . . .	»	25	»

### ԸՆՏԻՐ ՅԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ — Հակոբ

(ՅԵՐԵԲ պրակ)	Պարույրան . .	1 n.	10 ₣.
ՍՊԻՏԱԿ ԶԻՆ — Ալիքի Բակունց . .	»	40	»
ԶՈՐՍ ԲԱԼԼԱԴ — Յեղիշե Զարենց . .	»	15	»
“ԿԱՐՄԻՐ ՀՈԿՏԵՄԲԵՐ”			
ԿՈՄՈՒՆԱՆ — Ֆ. Բերեզովսկից . . .	»	40	»
“ՊԱՏՅՈՍԿԻՆԻ” ՎՐԱ — Յե. Բըլարով . .	»	20	»

## ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

ՅԵՐԵԲ ՊՐՈԼԵՏԳՐՈՂՆԵՐ — Արտ. Վեսյովից, Մ. Ջոյն-	»	
(Հասկածներ)	»	
» ԽԱՐԲ ՀԱՄԱՉԱՐԿԵՐ — Խորեն Ռադին		
ՅԵՐԵՎԱՆ (Վեա) — Մկրտիչ Արմեն		
ՀԱՐՑՐԵԲ ՆՐԱՆՑ — Սիրաս		
ԱՌԱՋԻՆ ԺՊԻՏԸ — Գուրգեն Հովհանն		
(Պատմվածքներ)		
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՆՈՎԵԼԼՆԵՐ — Հովհեկ Մեղիքյան		

ՀՀ Ազգային գրադարան



NL0368342

50. Կոմ.

Цена 50 коп.

Х. З.

52017



---

ХОРЕН РАДИО  
БОДРЫЕ ЗАЛПЫ

Повесть

---

На армянском языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.  
Москва, центр, Никольская, 10